

ՍԵՆՍԱԶԻՍՅՐ ԱՎ. Ս. Խ. Զ. ԼՈՒՍԺՈՂՅՈՄՍՍ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Ленинградского
Университета
СССР

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ

(Հաստատված ոգոստոսյան ուսուցչական
կոնֆերենցիաները անցկացնող Լուսժող-
կամատին կից Համառուսական Խորհրդակ-
ցության կողմից)

ՔԱՐԳՄ. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

371.4

n-62

ՍՈՒԽՈՒՄ
1933 թ.

371.4
Ի-62

34-Վ
ՆՁ 938

ՀԱՅ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԻՆՏԻՏՈՒՏ
ՎՅԵՏՈՎՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՅՆ
ՍՍՏՐ

Как организовать политехническое обучение

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ.

Աշխատանոցում, արհեստանոցում, դպրոցական հոդաբուժնում և ծնողական ձեռնարկություններում պոլիտեխնիկական ուսուցումը պիտի կառուցել համաձայն կայուն ուսումնական պլանների և ծրագրների, համաձայն դպրոցի կայուն դասացուցակի:

Պոլիտեխնիկական ուսուցման հրահանգչի վրա (առաջին աստիճանում դասատվի վրա) լիակատար պատասխանատվություն և զբվում՝ առաջադրված ծրագրի մշակման, աշխատանքային պրոցեսի կազմակերպման, ունակությունների հաշվառման և աշակերտի գիտելիքների համար, նմանապես և պոլիտեխնիկական ուսուցման ծրագրի հետ կապված եքսկուրսիաների կազմակերպման և նրանց կիրառման համար:

Ուսուցման կազմակերպումը պիտի իր մեջ ներառնի.—
ա) պլանավորումն. բ) աշխատանքի տեղի ընտրությունն ու նախամշակումը. գ) գործիքների, նյութի և ինստրուկցիայի նախապատրաստումն. դ) ընդունված մեթոդներով դասատվությունը, և ե) աշակերտի ունակությունների և գիտելիքների հաշվառումն:

Հրահանգիչը կազմում է տարեկան պլանը և յուրաքանչյուր դեկադայի աշխատանքային պլանը՝ հիմնվելով ծրագրի և դպրոցի խմբակներին հատկացրած ժամանակամիջոցի վրա, միաժամանակ հաշվի առնելով աշակերտների պատրաստականության մակարդակը:

Տարեկան պլանի մեջ հրահանգիչը ծրագրի նյութը դասավորում է ըստ կվարտալների, մասնանշում է թեմաները, նրանց մշակման հետևողականությունը և մշակմանը հատկացրած ժամանակամիջոցը, մասնանշում է տեղը, փորտեղ պիտի տարվեն աշխատանքները (աշխատանոց, արհեստանոց, դպրոցական հոդամաս, ձեռնարկություն):

Տարեկան պլանի հիման վրա հրահանգիչը կազմում է նախահաշիվ՝ նյութի և գործիքների անհրաժեշտ քանակության համար և մտափոր զուգակ այն արտաստանքի, մտքի

26.04.2013

48 852

կատարման վրա պիտի աշխատի աշակերտը: Նախահաշիվը և արտադրանքի առարկաների ցուցակը կցվում են պլանին:

Տարեկան պլանի հիման վրա հրահանգիչը կազմում է աշխատանքի դեկադայի պլանը, վորի մեջ աշխատանքը դասավորում է ըստ որերի, մատնանշում է տեղը, վորտեղ պիտի տարվի աշխատանքը, մատնանշում է բանվորական տեղերը, արտադրանքի առարկաները, վոր պիտի արտադրեն աշակերտները, նյութերը, գործիքները, այլ առարկաների հետ ունեցած կապի մոմենտները, մատնանշում է թե յե՞րբ և ինչպես պիտի տարվեն եկակուրսիաները:

Արտադրանքի առարկաների տեսակները վորոշելու ժամանակ, (վորոնց վրա աշխատելու յեն աշակերտները), անհրաժեշտ է նախատեսել, վոր առաջին աստիճանում աշխատանքները պիտի կատարվեն դպրոցի համար կահավորման առարկաներ արտադրելու վրա (պիտույքներ, գործիքներ և այլն): Այտեղ մտնում են.—ա) Իրացիպլինաների սարքավորման առարկաներ (թվաբանության, բնագիտության, մայրենի լեզվի համար և այլն). բ) դպրոցական հողամասի սարքավորման առարկաներ (ձազարների և թռչունների վանդակներ և այլն), մարմնամարզական հրապարակների և մանկական խաղերի համար (վոլեյ-բոլի համար ցանց գործել տեսակ-տեսակ խաղալիքներ շինել և այլն):

Յերկրորդ կոնցենտրի աշակերտների աշխատանքները, դպրոցի արհեստանոցում, պիտի կայանան սարքավորման հետևյալ առարկաները պատրաստելու մեջ.—ա) կաբինետները համար (գործիքներ, մոդելներ, դիտողական պիտույքներ և այլն). բ) արհեստանոցների և աշխատանոցների համար (դազգյահներ, գործիքներ, մետաղի և փայտի վրա աշխատելու համար սփանդակիչ գործիքներ և այլն). գ) դպրոցական հողամասի համար՝ ձազարների համար վանդակներ և այլն, նմանապես և ձեռնարկությունների, կոպերատիվների և այլն կողմից արված պատվերների կատարումն, առանձին արտադրանքի առարկաների կատարումն արտադրության և մասսայական սպառման համար:

Վերոհիշյալ բոլոր արտադրանքի առարկաները պիտի խստիվ համապատասխանեն ծրագրի պահանջներին ուսուցման համապատասխան տարիների համար:

Պրիխանիկական ուսուցման համար յուրաքանչյուր պարագմունք պիտի նախորոք մշակության յենթարկվի: Հրահանգիչը պիտի նախապես պատրաստի անհրաժեշտ գործիք-

ներն ու նյութը, դարձնի նրանց աշխատանքի համար պիտանի, սկզբից վորոշի աշակերտների մեջ նրանց բաժանելու կարգը, վորոշի առանձին աշխատանքների կատարման ցուցադրական ձևերը, նախապատրաստի գրավոր ցուցմունքներ կամ հրահանգչական քարտեր: Աշակերտներին աշխատանքի գնելուց առաջ, հրահանգիչը պիտի բացատրի նրանց աշխատանքի նպատակադրության մասին, տարրական տեխնոլոգիական տեղեկություններ տա նյութերի, դազգյահների և գործիքների մասին, ցույց տա առանձին աշխատանքների կատարման ձևերը, և ծրագրի բովանդակության համապատասխան կազմակերպի աշակերտների աշխատանքը:

Ծրագրի հետ կապված եքսկուրսիաները անցկացնելու ժամանակ հրահանգիչը նախորոք պիտի պայմանադրվի այն հիմնարկության հետ, ուր ուղևորվելու յե եքսկուրսիան, վորոշի եքսկուրսիայի նպատակադրումը, նրա անցկացնելու կարգը և ստացած արդյունքների հաշվատման ձևերը:

Հրահանգչի կողմից կազմակերպված եքսկուրսիաների բնույթը պիտի խստիվ կերպով համապատասխանի ծրագրի նպատակներին: Ընդհանուր բնույթ կրող եքսկուրսիաների հետ միաժամանակ անհրաժեշտորեն հանձնարարվում է անցկացնելու նեղ—մասնագիտական նպատակ ունեցող եքսկուրսիաներ, վորոնց թվին պատկանում են.—ա) ծանոթություն նոր ձևի սարքավորումների հետ, բ) ծանոթություն և ուսումնասիրություն ձեռնարկությունների, ելեքտրոնկայանների, սովխոզների, ՄՏԿ-երի, կոխոզների սարքավորման, գ) ծանոթություն և ուսումնասիրություն նյութերի մշակման մեթոդների, դ) ուսումնասիրություն ձեռնարկությունների տեխնոլոգիական պրոցեսներին, ե) ուսումնասիրություն տեխնիկայի պատմության և այլն:

Հրահանգչի կողմից պիտի հրավիրվեն եքսկուրսիայի նպատակադրման մշակմանը և նրա անցկացնելու կարգին մասնակցելու համար հանրակրթական առարկաների դասատուները և այն հիմնարկության տեխնիքական պերսոնալը, ուր ուղեվորվում է եքսկուրսիան:

Ծրք դասարանի աշխատանքը ձեռնարկություններում պիտի առանձնապես պլանավորման յենթարկվի և մտցվի դպրոցի պարագմունքների կայուն ցուցակի մեջ: Հրահանգիչը դպրոցի ուսումնական մասի վարիչի հետ միասին և մասնակցությամբ դպրոցական բժշկի ու արտադրության ինժ-տեխ — աշխատավորների ներկայացուցիչների, պիտի

ՀՀ ԿՊՄԿ ԳԵՍԱՎԻՍԻՄԻԱՆ ԳԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

59372-66

վորոշի այն ցեխերի մինիմումը, ուր պիտի աշխատեն աշակերտները, պիտի վորոշի յուրաքանչյուր ցեխում տարվելիք աշխատանքների ժամանակը: Յեւի ներսը պիտի ընտրել արտադրութեան համար տիպիք բանվորական տեղեր և պայմանավորվել ձեռնարկութեան հետ այդ տեղերը կցելու դպրոցին, նշանակել աշխատանքի ժամանակը աշակերտների համար յուրաքանչյուր բանվորական տեղում, վորոշել արտադրութեան համար տիպիք աշխատանքները, վորոնց կիրառումը աշակերտների ուժից վեր չլինի, մանրագնին մտածել ու վորոշել ղեկավարութեան, ու աշակերտների աշխատանքների վրա ունենալիք հսկողութեան ձևերը:

Այն դեպքում, յերբ աշակերտները բաժան-բաժան են յեղած ձեռնարկութեան մեջ բոս տարբեր ցեխերի և բանվորական տեղերի, հրահանգչի մշտական ոգնութեան և ղեկավարութեան հնարավորութեանը ինքնին վերանում և, ուստի նման դեպքերում, հրահանգչը աշակերտներին պիտի հանձնարարի վորակյալ բանվորներին, նրանց աշխատանքների վրա մշտական հսկողութեան ունենալու համար:

Դպրոցի աշխատանքներում և արհեստանոցներում բանվորական տեղերը այնպէս պիտի կազմակերպել, վոր նրանք համապատասխանեն աշակերտների աշխատանքները ուսցիոնալ կերպով դասավորելու պայմաններին: Այդ նպատակի համար սեղաններն ու դազգյահները պիտի հարմարեցվեն յուրաքանչյուր աշակերտի հասակին: Ամեն մի բանվորական տեղում պիտի զրված լինեն հատուկ հարմարութեաններ, տեղավորելու համար գործիքները, նյութերը և ինստրուկցիաները, և այդ այն հաշվով, վոր աշխատավոր-գործիքները միշտ տեղավորված լինեն աշակերտների աջ կողմը, չափի և սոււզման գործիքները՝ ձախ կողմը, իսկ հրահանգչական քարտերը և դժագրերը հատուկ պատվանդանի վրա— ուղիղ աշակերտների աջքերի դեմ ու նույն բարձրութեամբ:

Ամեն մի բանվորական տեղ պիտի ունենա նստարան— հանգստանալու համար: Իագգյահավոր բանվորական տեղերը պիտի կահավորված լինեն աշակերտների աշխատանքն ապահովող հատուկ հարմարութեաններով (ցանցեր, կաշվի դազնոց):

Ամեն մի դազգյահի մոտ պիտի հատուկ սարքավորված տեղ ունենալ գործիքների, նյութի և ինստրուկցիաների համար: Բանվորական տեղերի սարքավորումը կարող են պատրաստել աշակերտները աշխատանքի պարապմունքների

դասերին: Բանվորական տեղերը պիտի կցված լինեն ամեն մի աշակերտին:

Առաջնորդվելով ընդհանուր տարեկան նախահաշվով, յուրաքանչյուր կվարտալի սկզբում հրահանգչը կազմում և ներկայացնում է ձեռնարկութեանը նյութերի հարկավոր քանակութեան հայտ (Заявка). Հայտը կազմելուց առաջ հրահանգչը պիտի մանրամասնորեն ծանոթանա ձեռնարկութեան «մնացորդների» հետ և ճշտորեն պարզի ու գրի անցնի նրանց տեխնիքական անվանացուցակը, այն հաշվով, վոր նյութերի հայտի մեջ առաջին հերթին մտցնի դպրոցի աշխատանոցի և արհեստանոցի աշխատանքի համար պիտանի նյութերը արտադրութեան այդ «մնացորդներից»:

Արհեստանոցում և աշխատանոցում հրահանգչը հոգում է, վոր խնամքով պահվեն գործիքներն ու նյութերը: Բոլոր առկա գործիքները հրահանգչի կողմից մտցվում են ինվենտարի գիրքը և համարակալվում: Գործիքները պահվում են հատուկ սարքավորված պահարաններում: Անհատական գործիքները պիտի կցված լինեն ամեն մի բանվորական տեղին, հեռեպես և վորոշյալ աշակերտներին: Ընդհանուր գործածութեան գործիքները տրվում են աշակերտներին հատուկ գործիքային տոմսերով: Վորպէս կանոն փչացած գործիքները չպիտի տրվեն աշակերտներին: Առկա նյութերը նույնպէս պիտի հաշվատման յենթարկվեն, նյութերի յեղքը և մուտքը պիտի նշանակվեն մի հատուկ գրքի մեջ: Նյութերի պահպանութեան համար պիտի հատկացվեն հատուկ տեղեր, նրանց համար ևս պիտի պատրաստվեն հատուկ սարքավորումներ (դարակներ, պիրամիդներ և այլն):

Աշակերտների մասնակցութեանը գործիքների, նյութերի և պատրաստի արտադրանքների ընդունելութեան և բաշխման մեջ, նրանց պահպանութեան և հաշվառման գործում, պիտի զարգացնի աշակերտների մեջ տեխնոլոգիական գիտելիքներ և արտադրութեան կազմակերպչական ունակութեաններ: Գործիքների և նյութերի պահպանութեան, նրանց ուղիղ ոգտագործման և չփչանալու ամբողջ պատասխանատվութեանը ընկնում է հրահանգչի վրա:

Յերկրորդ կոնցենտրի համար մշակվելիք հրահանգչական քարտերի մեջ հրահանգչը մտցնում է.— Աշխատանքի նպատակագրումը, վորը պիտի ցույց տա, թե ինչ ունակութեաններ և գիտելիքներ պիտի ձեռք բերեն աշակերտները, աշխատանքի տեսակների անունները, աշխատանքին հատ-

կացրված ժամանակի տևողութիւնը, նյութը, գծագրերը արտադրանքները, աշխատանքի կատարման հետևողականութիւնը, գործիքները, վորոնցով կատարվում են առանձին աշխատանքները: Առաջին աստիճանում հրահանգչական քարտը պարզ և մատչելի յե լինելու: Չորրորդ խմբում արտադրանքի գծագրերի փոխարեն, տրվում է նրա նկարը: Գործիքները նշանակում են առանց առանձին աշխատանքների համար տեսակների բաժանելու, և աշխատանքի կատարման մանրամասն ցուցմունքների փոխարեն, տրվում է հիմնական աշխատանքի կատարման հետևողականութիւնը: Առաջին յերկու խմբակներում գրավոր հրահանգչական քարտեր չեն լինելու: Ամեն անգամ պարապմունքներից առաջ հրահանգիչը բանավոր ցուցմունքներ է տալիս:

Աշակերտների աշխատանքի ընթացքում ամեն մի առանձին աշակերտի վերաբերյալ նկատված սխախներն ու պակասութիւնները հրահանգիչը իսկույն և ետ պիտի ուղղի (սխալ դիրքերով կանգնելը և գործիքը բռնելը, վոչ ճիշտ մտեցումը աշխատանքի կատարման համար և այլն), ըստ վորում հիշյալ պակասութիւնների ուղղումն պիտի տարվի՝ վորպես անձնական օրինակով, այնպես էլ համապատասխան դիտողական պիտույքների դործածմամբ (աղյուսակների, դիագրամաների և այլն):

Կազմակերպելով աշակերտների աշխատանքը, հրահանգիչը պիտի հաշվի առնի, վոր առանձին աշխատանքների կատարման սկզբնական ունակութիւնները (սղոցելը, կարելը, տաշելը), աշակերտների մեջ պիտի տարվեն անհատականորեն: Աշակերտների աշխատանքի ավելի բարդ ձևի կազմակերպումն կարող է տեղի ունենալ միմիայն այն ժամանակ, յերբ աշակերտները կարողանան ճիշտ ձևով ոգտվել գործիքներից և առանձին աշխատանքներ կատարել: Աշակերտների բրիգադային (ողակային) աշխատանքները (վորպես աշխատանքի կազմակերպման ձևերից մեկը), վորպես կանոն, տեղի յեն ունենում այն պայմանով, վոր յուրաքանչյուր աշակերտ առանձնապես ստանա հրահանգչից պարզ առաջադրանքներ: Աշակերտների աշխատանքներն այնպես պիտի կազմակերպել, վոր նրանք ոժանդակեն սոգա ների մեջ սոցմրցակցութիւն լայն ծավալմանը:

Աշխատանքի մեթոդների ընտրութիւնն և կիրառման մեջ հրահանգիչը պիտի առաջնորդվի, ի նկատի ունենալով, վոր նրա խնդիրների մեջ մասնում է, ամենից առաջ, աշակերտ-

ների մեջ պատվաստել ծրագրով վորոշված վորակյալ ունակութիւնների մի ծավալ: այդ ունակութիւնների կարգին պատկանում են.—

- ա) գլխավոր արտադրութիւնների տարրական գործիքներին տիրապետելու ունակութիւնները,
- բ) ամբողջական իրերի և առանձին աշակերտների կատարման ունակութիւնները,
- գ) աշխատանքի կազմակերպման ունակութիւնները,
- դ) գլուտարարութիւն, կառուցողական ռացիոնալիզացիայի և այլն ունակութիւնները:

Գործիքներին տիրապետելու ունակութիւնների պատվաստման մեթոդները ամբողջական արտադրանքների և առանձին աշխատանքների կատարման մեջ լինելու յեն այն, վոր աշակերտները կարողանան տարբեր աշխատանքային ոպերացիաներ կատարել.— ուանդել (հարթել), փորել, սղոցել, կտրել ծակել և այլն:

Կատկած չկա, վոր արտադրական ոպերացիաների և աշխատանքի կազմակերպման և այլն ունակութիւնների պատվաստման մեթոդները տարբեր են լինելու:

Աշխատանքային ուսուցման մեթոդների տարբեր մեկնաբանութիւնները և նրանց յերկու հիմնական մեթոդների բերելը— ոպերացիոն և առարկայական— չի արտահայտում վերև բերված գրութիւնը, քանի վոր ընդգրկում է ունակութիւնների մի խումբ միայն (ոպերացիաներ կատարելու ունակութիւնների պատվաստումն) և ըստ ելութիւն իր մեջ ամփոփում է վոչ թե աշխատանքի մեթոդիկան, այլ նրա կազմակերպման ձևը (առարկայական մեթոդը՝ մի աշակերտի կողմից մի ամբողջական իր պատրաստելը, ոպերացիոն մեթոդը՝ մի խումբ աշակերտների կողմից մի ամբողջական իր պատրաստելը— աշխատանքի բաժաման հիմքերով):

Պիտի վճռականապես հրաժարվել Աշխատանքի Կենտրոնական Ինստիտուտի (ԱԻԿ) մեթոդների կիրառումից առաջին աստիճանի դպրոցում:

Անգամահատված շարժումների վարժեցման մեթոդը (ԱԻԿ) կարելի էլինի սահմանափակ չափով ոգտագործել յերկրորդ կոնցենտրի բարձր խմբակներում գործիքներին տիրապետելու սկզբնական ունակութիւնները ձեռք բերելուց հետո, բայց անհրաժեշտ է լիովին ոգտագործել Աշխ. Կենտ. Ինստ. ի մեթոդիկան բանվորական տեղի, աշխատանքի կարգի և հանգստյան կազմակերպութիւնների մեջ:

Աշակերտներն աշխատանքի ժամերին դպրոցի արհեստանոցներում և աշխատանոցներում, հրահանգիչը աշակերտներին աշխատանքներին շարունակաբար հսկելով, միաժամանակ սխտեմատիկաբար տանում է նրանց ունակութունների և գիտելիքների հաշվառումն: Աշխատանքի հաշվառումը տարվում է անհատականապես, այսինքն ատանձնապես վորոշվում է յուրաքանչյուր աշակերտի կատարած աշխատանքը նրա աշխատանքի ընթացքում: Ամեն մի ատանձին աշխատանքի ավարտումից հետո հաշվառման հետևանքները գրի յեն անցնում դրա համար ունեցած հատուկ հաշվառման քարտում կամ տետրում, վորի մեջ մատնանշվում է.—

1) Առաջին աստիճանի համար.— դասարանը, աշակերտի ազգանունը, յերբ է սկսել աշխատանքը, յերբ ավարտել է, ինչ նյութեր է գործադրել, ինչ գործիքներով է աշխատել, աշխատանքի գնահատումը դասատվի կողմից: 2) Յերկրորդ կոնցենարի համար.— դասարանը, աշակերտի ազգանունը, յերբ է սկսել աշխատանքը, յերբ ավարտել է, ինչ նյութեր է ոգտագործել, ինչպիսի դազգյաինների վրա յե աշխատել, ինչ ոպերացիաներ է կատարել, ինչ գործիքներով է աշխատել, աշխատանքի գնահատումը դասատվի կողմից:

Յուրաքանչյուր կվարտալի վերջում, ամեն մի ատանձին աշխատանքի մասին, հաշվառման տվյալների հիման վրա, հրահանգիչը կազմում է հաշվառման մի ընդհանուր աղյուսակ, վորի մեջ նշանակվում է ամեն մի աշակերտի աշխատանքի գնահատականը ըստ բաժինների.— 1) Նյութերի տեսական մշակումը. 2) Իրերի և ոպերացիաների կատարման գործնական ունակությունները. 3) Կոլեկտիվ աշխատանքի ունակությունները. 4) Աշխատանքի կազմակերպումն և ունակությունները. 5) Քյուտարարության ընդհանրացման ունակությունները. 6) Աշխատանքային կարգապահությունը. 7) Տեսական գիտելիքներով ոգտվելու կարողությունը գործնական աշխատանքի մեջ:

(„3. K. П.“ լրազրից).

**ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ—ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ:**

Յերկրորդ հնգամյակի հեռանկարներում ակընհայտ պարզությամբ ծառանում է պոլիտեխնիզացիայի ամբողջ գործի իր բարձրության աստիճանի վրա դնելու խնդիրը: Այդ

պահանջում է մեզինց մակսիմալ նրբազգացություն և խորագույն սկզբունքայինականություն պոլիտեխնիզացիայի բոլոր կոնկրետ հարցերի կարգավորման մեջ, մասնավորապես արտադրական—պոլիտեխնիկական սարքավորման հարցերի կարգավորման մեջ:

Պոլիտեխնիկական սարքավորման մասերի ճիշտ ընտրությունը, աշխատանոցի կազմակերպման սկզբունքների իճշգրիտ վորոշումը—պոլիտեխնիկական ուսուցման ճիշտ կազմակերպության ամենակարևոր պայմաններն են: Աշխատանոցը տարրական դպրոցում պիտի կառուցվի պոլիտեխնիզմի իրեն էյությամբ ընտրվող ամենապարզ սկզբունքների հիման վրա:

Այն սարքավորումը, վոր գոյություն ունի տարրական դպրոցներից շատերում, չի կարելի համարել պոլիտեխնիկական: Նա մեծ մասամբ կրում է անալյազործական—արհեստավորական բնույթ և իր բովանդակությամբ արաանայաում է անցյալ դարու յերկրորդ կեսում Շվեդիայում և Ֆինլանդիայում մշակված ձեռքի աշխատանքի սխտեմը:

Ուստի ներկայիս հիմնակաը խնդիրն է՝ ստեղծել պոլիտեխնիկական սարքավորման իր սխտեմը՝ վոր պիսին պիտի համապատասխանի սոցիալիստական վերակառուցման շրջանում կադրեր պատրաստելու խնդիրներին: Այգպիսի սխտեմի բացակայությունն էր հիմնական պատճառը, վոր մեր դպրոցում մինչև այժմս էլ շատ քիչ փոփոխված ձևով պահպանվում էր ձեռքի աշխատանքը: „Չախակողմյան“ բնորոշումը, թե գալրոցական արհեստանոցների մասին տարած հոգասաբությունը հետադիմական զբաղմունք է, զենք էր ծառայում աշակողմյանների ձեռքին դիմադրելու համար այդ արհեստանոցների արմատական վերակառուցման գարծին պոլիտեխնիզմի սկզբունքնեչի հիման վրա:

Աշխատանքային սարքավորումը, վոր առաջներում մրտցնում էյին դպրոցներում, չի կարելի համարել պոլիտեխնիկական, նախ՝ այն պատճառով, վոր այդ սարքավորումը պարփակում էր իր մեջ նյութի մշակման միայն մի տեսակը—մեխանիկականը և այն էլ զլխավորապես ձեռքի մշակումը:

Պոլիտեխնիկական դպրոցը պիտի սարքավորում ունենա, վոչ միայն նյութի մեխանիկական մշակման համար,

այլ և քիմիական, այլ և ագրոքիտոլոգիական (գյուղական տնտեսութեան), պիտի ծանոթութեան տա ելեկարոտեխնիկայի մասին և ընդհանրապէս եներգետիկայի մասին: Միայն այդ պայմանում գալոցը պիտի ծանոթացնի մանուկներին արտադրութեան ընդհանուր գիտական սկզբունքների հետ, և բոլոր արտադրութեանների տարրական գործիքների հետ վարվելու ունակութեաններ տա:

Այդ հարցում չկա սկզբունքային տարբերութեան 1-ին և 2-րդ աստիճանի դպրոցների մեջ: Ընդակառուակը, պիտի լինի կրթական նյութի միտրինակութեան: Պոլիտեխնիկական ուսուցման բովանդակութեան ասանձնահատկութեանը տարրական դպրոցում, հիմնականում կայանում է նրանում, վոր.—

ա) Մեխանիկական մշակութեան հիմնական գործիքների և ձևերի տիրապետութեանը ձեռք ե բերվում գլխավորապէս հեշտութեամբ մշակման յենթարկվող նյութերի վրա, մանավանդ փայտի վրա:

բ) Քիմիական աշխատանքը տարրական դպրոցում կարող ե տրվել միայն մի շարք պարզ լաբորատորային տեխնոլոգիական աշխատանքների ձևով, վորի համար անվանա շարքում ցույց ե տրված անհրաժեշտ արքական սարքավորումը:

գ) Եներգետիկայի սարքավորումը տարրական դպրոցում կազմված պիտի լինի շարժիչների ամենահասարակ մոդելների մասերից (ելեկտրական շարժիչ, հողմաշարժիչ, շրային տուրբինա, շոգեշարժիչի սխեմա և այլն), Ինամո—մեքենայի մոդելների մասերից, ելեքտրոտեխնիկայի անոթների մասերից, մոդելները պիտի լինեն գործող և կարողանան կատարել, գոնե, ամենավորրիկ աշխատանքներ:

դ) Գյուղական տնտեսութեան սարքավորումը կազմված պիտի լինի հողի մշակման ամենահասարակ գործիքներից, բույսերից, դպրոցական հողամասից, գյուղատնտեսական մեքենաների մոդելներից, փորձնական ագրոքիտոլոգիական աշխատանքների նյութերից և անոթներից:

Այսպիսով նյութերի մշակման բոլոր հիմնական ձևերի համար սարքավորում մտցնելը—անվանաշարքի (номенклатура) վերակառուցման առաջին ուղին ե՝ տարրական դպրոցի համար:

Սարքավորման անվանաշարքի վրա կառուցման յերկրորդ ուղին ե՝ վոչ միայն արտադրական—աշխատանքային, այլ

և լաբորատորային—տեխնոլոգիական սարքավորում մտցնելը: Պոլիտեխնիկական ուսուցումը պահանջում ե վոչ միայն աշխատանքային ունակութեաններին տիրապետելը աշակերտների կողմից, այլ և նրանց ունակութեանները գիտական—տեխնոլոգիական հիմնավորումը: Առանց դրան, աշխատանքային ուսուցումը անխուսափելիորեն կըկրի արհեստային բնույթ:

Սարքավորումը այդ պարագամունքների համար, պիտի համապատասխանի ծրագրային բովանդակութեանը՝ նրա տեխնոլոգիական ուսուցման մասում, 1-ին աստիճանի ուսուցման յուրաքանչյուր տարիների համար: Այդ կարելի յե ներկայացնել հետևյալ ձևով.—

1) ՆՅՈՒՅԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՅՅՈՒՆԸ.

ա) Ուսումնասիրելիք նյութերի նմուշներ (կամ նմուշների կալիեկցիաներ), վորոնք ապացուցում են նյութերի կառուցվածքը, կազմը, հատկութեանը.

բ) Անոթներ՝ նյութերի հատկութեանը փորձելու համար.

գ) Նյութերին նոր հատկութեան տալու միջոցներ:

2) ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՅՅՈՒՆԸ.

ա) Տեխնոլոգիական աղյուսակներ գործիքների կառուցվածքի մասին (գործիքների և դադգյահներին).

բ) Գործիքները և դադգյահների նմուշներ—ուսումնասիրութեան համար:

գ) Գործիքների աստիճանական զարգացումը ցույց տվող տեխնոլոգիական աղյուսակներ:

3) ՄՇԱԿՄԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՅՅՈՒՆԸ.

ա) առողջապահական ուղիղ դիրք ցույց տվող աղյուսակներ.

բ) Հրահանգչական քարտեր՝ աշխատանքի բոլոր հիմնական անսակների մասին, նաև գործիքները սարքի բերելու մասին ուսուցման յուրաքանչյուր տարվա համար (աշխատանքային քարտեր):

4) ՊԱՏՐԱՍՏԻ ՆՅՈՒԹԵՐԻ (ԱՐՏԱԴՐԱՆՔԻ)

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.

ա) Բրակներէի նմուշներ՝ մանուկներէ աշխատանքներում պատճառներէ վերլուծութեամբ.

բ) Նյութերի տեխնիկական հատկութիւններէ սխալ և անսխալ կիրառման նմուշներ՝ պատրաստի արտադրանքի մեջ: Տեխնոլոգիայի ուսումնասիրութեան ժամանակ պիտի ի նկատի ունենայ, վոր ուսուցման պոլիտեխնիկական սկզբունքը պահանջում է ուսումնասիրել գործիքները, նյութերը և պրոցեսները նրանց փոխադարձ սերտ կապի ե փոխադարձ գործակցութեան մեջ և վոչ թէ բաժանելով մէկը՝ մյուսից և նրանց վրա աշխատող մարդուց:

Հարկավոր է ի նկատի ունենալ նաև, վոր յեթե մենք խոսում ենք, դիցուք, նյութերի փորձերի մասին, ապա այդ փորձերը կարող են լինել ֆիզիքական (մեխանիկական, էլեքտրական, ջերմային և այլն) կամ քիմիական, կամ ազդեցիտրոգիական (փորձնական աշխատանք բուսաբանութեանից, կենդանաբանութեանից):

Մարքավորման բաժինների հաշվի մեջ պիտի մտնի սարքավորումը տարրական մեխանիկայի պարապմունքների համար (ամենահատարակ մեքենայադիտութեան): 1-ին աստիճանում մեխանիկայից աշակերտներին պիտի հասկացողութեան տար, այսպես կոչված «պարզ մեքենաների» նշանակութեան մասին. — լծակների, թիք մակարդակների, սեպերի, բլտկների (շարժրացնող շղթաներ), վիմտերի և ատամնավոր անիվների, ապա ծանոթութեան տալ ավելի պարզ հաղորդիչ մեխանիզմներէ մասին. — շիփների, ատամնավոր անիվների, եկացնտորիկի, զոգավոր շարժիչի և այլն:

Ինչպես առաջինները, այնպես էլ յերկրորդները հանդիսանում են մեքենաների հիմնական ելեմենտները, և հետևապես, առանց նախապատրաստական պարապմունքների մեխանիկայից, մեքենաները մանուկներէ համար անմատչելի կլինեն:

Տարրական գործնական ծանոթացումը մեխանիզմների հետ առանց տեսական հիմնավորման, այսինքն մոնտաժային աշխատանքները՝ Մեկանոտ արպի պատրաստի մոտերի հավաքումով մեխանիզմներ ստանալու համար (վորոնք վա-

ճառքի մեջ «կենսատրուկտոր», «Պիոներ» անուններն են կրում), կարող են սկսվել դպրոցական 1-ին խմբից:

Պոլիտեխնիկական սարքավորման պարտադիր բաժին պիտի կազմի սարքավորումը զծագրութեան պարապմունքների համար, վորովհետև աշակերտներին գրաֆիկայից դադար տալը, պլանավորման աշխատանքները նկարների, եւքիզների, պարզ գծագիրների միջոցով արտահայտելու կարողութեանը — չափազանց կարևոր խնդիրներ են պոլիտեխնիկական կրթութեան համար:

Ամեն կերպ մեխանիզացիայի յենթարկել աշխատանքը — այդ սոցիալիստական վերակառուցման հիմնական պայմաններից մեկն է: Իրա համար էլ աշխատանքում անհրաժեշտ է մաքսիմում հնարավորութեամբ արտացոլել այն հիմնականն ու տիպիքը մեխանիկական մշակութեան մեջ, վորպիսին մենք ունենք արտադրութեան մեջ: Միևնույն ժամանակ, ի հարկէ, անհրաժեշտ է, վոր դազդյաններն ու մեքենաները բավարարեն ուսումնական — պեդոլոգիական պահանջները. — 1) մատչելի լինեն մանկան աշխատանքին և հասկացողութեանը. 2) անվտանգ լինեն. 3) համապատասխանեն մանկան հասակի պեդոլոգիական և ֆիզիոլոգիական առանձնահատկութեաններին. 4) հնարավորութեան տան իրականացնելու արտադրողական աշխատանքը և կատարելու այն օպերացիաները, վորոնց արհապետում է յերեխան մի շարք առարկաների և կառույցների պատրաստման պրոցեսում:

Պիտի մտցնել զանազան աշխատանքային հարմարեցումներ, այսպիսի կոչված՝ աշխատանքի բնթացքը եւ շտապնազ և ճշտող ուղեղորիչներ (ֆուզանի տախտակ, գալիկուն (КОЛОВОРОТ) դազդյան, դուր և այլն): Սյուպիսի ուղեղորիչները սովորաբար ավելի կամ պակաս բարդ ձևով և բոլոր մեքենայական դազդյաններում կիրարկում են արտադրանքը ավտոմատիկ կերպով հարկավոր շարժումի և չափի վերածելու համար: Հետևապես այդ ձևը յերեխային մտացնում է ամենապարզ ձևով մշակման պրոցեսների մեքենայական հասկացողութեանը, և հանդիսանում է անվանաշարքի պոլիտեխնիկական վերակառուցման ամենահեշտական միջոցներից մեկը: Ուղեվորիչներ մտցնելը, այնուամենայնիվ, չի վերացնում առանց ուղեղորիչների աշխատելու անհրաժեշտութեանը յերեխայի մոտորային ընդունակութեանների զարգացման համար:

Շատ արժեքավոր և պոլիտեխնիկական ուսուցման արտադրութեան մեջ տեսակավոր, կիսապատրաստի նյութերի կիրառումը, որինակ՝ հարկավոր լախութեան տախտակներ, պատրաստի ստանդարտային մասեր՝ շինարարական աշխատանքների համար (շինարարական մեկանստ), վորպեսզի ազատել յերեխաների սովյալ հասակը ավելի ծանր աշխատանքներից և գլխավոր ուշադրութեամբ փոխադրել մոնտաժային — կառուցողական աշխատանքների վրա: Յեթե մենք վերցնենք մեխանիկայի դասի աշխատանքները, ապա այստեղ հիմնական նպատակ ունի սովորեցնել աշակերտներին՝ վոչ թե հասարակ հաղորդիչ մեխանիզմներ պատրաստելը, այլ նրանց նշանակութեան ըմբռնումը և կիրառման կարողութեանը, նաև նրանց տեղին գործածումը տարբեր մեխանիզմների մեջ: Հետևապես, մանկավարժական տեսակետից նպատակահարմար է, տալ այդ մասերը պատրաստի դրութեամբ: Բացի դրանից աշխատանքի կազմակերպումը աշխատանոցում մոտեցնել նյութերի պարենավորման այն սիստեմին, վորպիսին գոյութեան ունի արտադրութեան մեջ, ուր հիմնական մշակողական և մոնտաժային — հավաքողական ցեխերը ստանում են պատրաստի կիսաֆաբրիկատներ մթերողական ցեխերից կամ այլ արտադրութեաններից:

Անհրաժեշտ է սարքավորման չափավորումը (нормирование), այսինքն նրա հարմարեցումը մանկական հասակին: Անթույլատրելի յե այլևս աղյակիսի դրութեանը, վոր մանուկներն աշխատեն այնպիսի գործիքներով, վորոնք պատրաստված են հասակավորների համար: Բացի դրանից անհրաժեշտ է պարզել այն բոլոր հիմնական պահանջները, վորոնց պիտի բավարարի պոլիտեխնիկական սարքավորումը (բանվորական տեղեր, զագգյահներ, գործիքներ, հարմարեցումներ, ուղեքիշներ, տեխնոլոգիական սարքավորում և այլն) վոչ միայն չափի, ձևի և կշռի տեսակետից, այլ և մի շարք մանկավարժական և տեխնիկական պահանջների տեսակետից — կառուցվածքի պարզութեան, տիպիքութեան, վոչ թե մանկ մասսայական արտադրութեան, գիմացկանութեան և այլն:

Աշխատանոցների քանակը գպրոցում, վորոշվում է առկա՝ մի շարք կազմակերպչական պայմաններից:

1-ին պայմանը: Մանրաբեռնումը (աշակերտների թիվը) մի դեկավարի համար չպիտի անցնի 20 հոգուց: Հետևապես այդ աշխատան-

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Ленинградского
Университета
СССР

քային խմբակի 20 հոգու հաշվից ել (և վոչ թե դպրոցական լրիվ խմբի, վոր սովորաբար բաղկացած է լինում 35-40 հոգուց) պիտի յեղնել՝ բանվորական տեղի քանակը և աշխատանոցի շենքի մեծութեանը վորոշելու ժամանակ:

2-րդ պայմանը: Ինկատի ունենալով, վոր դպրոցական մի խումբը աշխատանքային պարապմունքների համար բաժանվում է յերկու մասի, բնականաբար պիտի հաշվի առնել յերկու աշխատանոցներ:

Ավելի նպատակահարմար կլինի սարքավորումը բաժանել այդ յերկու սենյակների (աշխատանոցների) մեջ այս ձևով. —


1-ին աշխատանոցը արտադրական — աշխատանքային պարապմունքների համար է, նյութերի՝ աշխատանքի 2 տեսակով (փայտի և մետաղի վրա) մեխանիկական մշակման (ձեռքով և մեքենայով) համար: Այդ աշխատանոցի հիմնական սարքավորումները՝ գործիքներն ու զագգյահներն են, վորոնց վրա աշակերտները անմիջական աշխատանք են գործադրում:

2-րդ աշխատանոցը իր հիմնականով՝ եներգետիկայի, ագրոթիոլոգիայի, տարրական դորձնական մեխանիկայի, գծադրութեան լաբորատորական պարապմունքների համար է, նաև թղթյա, կարտոնյա և մանսածագործական նյութերով աշխատանքների համար:

Այն դեպքերում, յերբ հնարավորութեան չկա յերկու աշխատանոցներ հատկացնելու, հանձնարվում է մեկ աշխատանոց, բայց շարժական սարքավորումներով, վորի մի մասը միաժամանակ կարելի լինի փոխադրել դասարանի դպրոցական խմբի 2-րդ կեսի հետ պարապելու համար:

Համկումկուսի Կենտկոմի «տարրական և միջնակարգ դպրոցի մասին» վորոշումով առաջարկվում է «արդեն 1932 թվում, վորպես տարական, այնպես ել միջնակարգ դպրոցների հիմնական մասսան ապահովել ուսուցման սարքավորման անհրաժեշտ միջամումով, վորի համար անհրաժեշտ է «միամսյա ժամկետում» մշակել հիմնական պիտույքների և

99-2765



պոլիտեխնիկական սարքավորման ստանդարտները“:

Յեկ ապա. „ամենակարճ ժամկետում կազմակերպել տեղերում ուսումնական պիտույքների և ուսումնական սարքավորման արտադրությունը մասսայական դպրոցի համար, ոգտագործելով այդ նպատակների համար տեղական բեասուրանները“:

Այստեղ մենք հարց ենք դնում տարրական դպրոցի աշխատանոցի պոլիտեխնիկական սարքավորման բնույթի մասին, նրա հիմնական տիպերի և տեղերում նրա պատրաստման հնարավորությունների մասին:

Այս հարցը գրիված է վորպես մեկը ամենաակտուալ հարցերից, վորի նշանակություն մասին, զեռ 1-ին պոլիտեխնիկական համագումարի բանաձևում ասվում է, վոր „առանց այդ հեռանկարների լուծման (այսինքն՝ նյութական—արտադրական սարքավորման), դպրոցի պոլիտեխնիկացման մասին յեղած բոլոր վորոշումները կմնան վորպես լոկ վորոշումներ“:

Մինչև այժմ դպրոցը զեռ ճշգրիտ գաղափար չի կազմել աշխատանոցի սարքավորման բովանդակություն մասին, իսկ այդ հանգամանքը նշանակալից չափով պարզում է այն աշխատանքների բովանդակությունն ու բնույթը, վորոնք տարվում են այնտեղ աշակերտների հետ:

ԱՇԽԱՏԱՆՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ

Աշխատանոցի ամբողջ աշխատանքը հիմնականում կարելի յե բաժանել 2 մասի. 1) անմիջական արտադրական աշխատանք՝ նյութի մշակմամբ և մոնտաժ—հավաքով և զրա համար՝ գործիքների, զազգյահների, աշխատանքային հարմարեցումների և հրահանգչական—մեթոդական պիտույքների ոգտագործումով. 2) լաբորատորային աշխատանք՝ տեխնիկայի և տեխնոլոգիայի ելեմենտներով:

Հետևապես, նպատակահարմար է արդեն աշխատանոցի համար բնակարանի ընտրություն ժամանակ՝ հատկացնել նրա համար յերկու սենյակ. 1) Արտադրական աշխատանքների համար, և 2) լաբորատորային պարապմունքների համար: Ծայրահեղ դեպքում հնարավոր է և այդ յերկու մասերի միա-

ցումը մի բնակարանի մեջ, բայց այդ արդեն եյական պակասություն կլինի:

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Աշխատանոցի համար բնակարան պիտի հատկացնել՝ ըստ տարածություն, լույսի և ալլն, ավելի լավերը, քան սովորական դասարանների համար, համենայն դեպս նրանցից վոչպակասավոր: Վորպես կողմնորոշող նորմաներ, պիտի ինկատի ունենալ հետևյալ պայմանները.—

Հատակի մակերևույթի տարածությունը՝ 2¹/₂—3 բառ. մ.—1 մարդու համար: Բովանդակությունը՝ 9-10 խոր. մետր—1 մարդու համար:

Լույսի տարածությունը՝ ¹/₄—¹/₃ (պատուհանի լույսի տարածության հարաբերությունը՝ հատակի տարածությանը):

Վորպես արտադրական, այնպես եյ լաբորատորային մասի աշխատանոցը պիտի հաշվի առնել զրպրոցի խմբի կեսի միաժամանակյա պարապմունքների համար՝ (ամեն մեկում), հետևապես, ամեն մի սենյակը հաշված պիտի լինի միջին հաշվով—20 մարդու համար:

Աշխատանքային պարապմունքների համար խրմբի այդ ձևով 2 մասերի բաժանումը աշխատանքի դեկավարություն սպեցիֆիկ պայմաններից է առաջ գալիս, վորովհետև այդ աշխատանքը ուսուցչից պահանջում է մեծագույն ուշադրություն, քան այդ պահանջվում է սովորական դասարանային պարապմունքների համար:

Դպրոցում աշխատանքի դասի մասնագետ ունեցած դեպքում, խմբավարը հնարավորություն ունի խումբը կիսելու նրա հետ, մյուս կեսի հետ պարապելով կամ արտադրական մասում և կամ լաբորատորային մասում, համաձայն աշխատանքի բնույթի: Հակառակ պարագայում խմբի մի կեսի համար աշխատանոցի մեկ կամ մյուս մասում կազմակերպում են ինքնուրույն պարապմունքներ:

Յանկալի յե, վոր աշխատանոցի յերկու մասերն եյ տեղավորված լինեն կից բնակարաններում և

անմիջական կապ ունենան իրար հետ:

Սենյակները պիտի ապահոված լինեն լավ ողազտիչներով կամ գոնե հասարակ ողանցքներով:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Աշխատանոցի արտադրական մասում մենք պիտի ապահովենք տարբեր նյութերի, հումուլթի տարբեր տեսակների մշակման հնարավորութիւնը ե հետևապէս տանքսարքավորում և գործիքներ, վորոնք դրա համար հարկավոր կզան:

Նյութերից մենք վերցնում ենք հիմնականները, վորոնք մեծ նշանակութիւն ունեն ժողովրդական տնտեսութեան համար, մատչելի յեն նրանց վրա աշխատաք գործ դնելու համար, և հնարավորութիւն են տալիս ծանոթանալու տեխնիկական մշակման հիմնական տիպիք մեթոդների հետ:

Այդ նյութերի թվին են պատկանում—փայտը, թեթև մետաղը, թաղիքը, թուղթը, կարտոնը և պլաստիկային նյութերը (կավը, ավազը, ցեմենտը և այլն):

Քիմիական մշակման մեթոդները, վորպէս պակաս մատչելի, պակաս մշակված՝ տարրական դարոցի աշակերտների համար, տրվում են միայն լաբորատորային—տեխնոլոգիական մասում, գլխավորապէս, մի շարք փորձերի և փորձիկ աշխատանքների ձևով՝ դրական քիմիայից (ներկեր, սապոն, սոսինձ և այլն պատրաստելը):

Աշխատանոցի արտադրական մասի սարքավորումը պիտի արտացոլի կարգավորումների և սարքավորումների ավելի բնանիշ և տիպիք առանձնահատկութիւնները աշխատանքի համար, վորնք կան արտադրութեան մեջ, վորպէսզի աշակերտները կարողանան ընդհանուր գաղափար կազմել մշակման այս կամ այն հարցի եյութեան մասին, և հասկանան սկզբունքորեն միատեսակ, բայց փոփոխված և բարդացած դազգյանների, սարքավորումների և արտադրութեան գործիքների աշխատանքները:

Բացի դրանից աշխատանոցի ամբողջ կահավորումը այնպէս պիտի լինի կառուցված, վորպէսզի.—1) ապահովի յերեխաների ակտիվ աշխատանքի մաքսիմումը տարրական մշակողական ունակութիւններին տիրապետելու համար՝

արտադրական աշխատանքի պոցեսում և 2) տա յերեխաներին ճշգրիտ և հաստատուն ուղղութիւն աշխատանքի կուրսուրայում, այս բառի ամենալայն մտքով:

Աշխատանոցի արտադրական մասի սարքավորումը իր մեջ պիտի ներփակի հետևյալը.—

- 1) Բանվորական տեղը՝ աշխատանքի համար, հիմնական հարմարութիւններով:
2. Հարմարեցումներ՝ աշխատանքի համար, դազգյաններ, գործիքներ և այլն ընդհանուր ողազտործութեան համար:
3. Գործիքներ՝ անհատական ողազտործութեան համար և նրանց պահպանելու տեղը:
4. Հրահանգչական—տեղեկատու պիտույքներ և նրանց պահպանելու տեղն ու դասավորումը:
5. Հաշվառքային—կոնտրոլային սեղան, պարտավորութիւնների, սոցմըցակցութեան, հարվածայինութեան և այլն տախտակ:
6. Նյութեր՝ աշխատանքի համար և նրանց պահպանելու տեղը:
7. Աշխատութեան յենթակա արտադրանքների պահպանութեան տեղը:
8. Սանիտարական-առողջապահական անկյուն՝ հիմնական մեղիկամենտների պահարանով, լվացարան, սենյակը մաքրելու խոզանակ և այլն:

ԱՇԽԱՏԱՆՈՑԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԱՅԻՆ—ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԱՍԻ ՍԱՐԲԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Լաբորատորային—տեխնոլոգիական մասը պիտի համապատասխանի հետևյալ ինդիքներին:—

1. Հնարավորութիւն տա այնտեղ յերեխաների հետ կատարելու մի շարք տեխնոլոգիական փորձեր և հետազոտութիւններ, վորոնք բղխելու յեն՝ վորպէս արտադրական մասում կատարած աշխատանքներից, այնպէս ել յերեխաներին ծանոթութիւն տալու պահանջից՝ տեխնիկայի ամենապարզ ելեմենտների մասին—եներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմմունալ—տնտեսութեան և այլն ասպարիզում:

2. Հենց այստեղ ել պիտի ստեղծված լինեն համապատասխան պայմաններ, վորոնք հնարավորութիւն տան աշակերտների հետ կատարելու մի շարք լաբորատորային աշխատանքներ, նրանց քիմիական տեխնոլոգիայի մի քանի հարցերի հետ ծանոթացնելու նպատակով:

3. Տեխնոլոգիայի և տեխնիկայի հարցերի վերաբերյալ գործնական աշխատանքներ կատարելու համար հարկավոր յեղող բոլոր պիտույքները, անոթները, ապարատները և այլն, անհրաժեշտ է հավաքել մի տեղ և այնպես պահել, վոր այս բոլորը միասին իրենցից ներկայացնեն մի փոքրիկ պոլիտեխնիկական թանգարան, վորին դարձրել կարողանա ոգտագործել վոչ միայն իր ներքին դպրոցական կարիքների համար, այլ և շրջակայքի բնակչութեան մեջ պոլիտեխնիզմի մասին ակրնհայտ պրոպագանդա մղելու համար: Այդ առանձնապես նշանակալից է որինակելի դրպրոցների համար՝ գյուղական վայրերում և փոքրիկ քաղաքներում: Լուսժողկոմի որինակելի դպրոցների մասին կանոնադրութեան մեջ (23 հոկտ. 31 թ) խոսվում է այդպիսի թանգարանների կազմակերպման մասին — „յերկրաբանական — պոլիտեխնիկական թանգարանները՝ որինակելի դրպրոցներին կից, ներկայանում են, վորպես դարձրի ոժանդակիչ հիմնարկութիւններից մեկը“:

Աշխատանոցի լաբորատորային — տեխնոլոգիական մասի առանձին բաժինները և նրա սարքավորումը՝ լաբորատորային գործնական աշխատանքների համար, մեզ ներկայանում են հետևյալ ձևով —

1. Եներգետիկա (էներգիա ստանալու հիմնական տեսակները և նրա ոգտագործումը):
2. Նյութերի մեխանիկական մշակումները (մեխանիկական տեխնոլոգիայի ելեմենտները):
3. Նյութերի քիմիական մշակումները (քիմիական տեխնոլոգիայի ելեմենտները):
4. Ագրո — լաբորատորիա:
5. Լաբորատորային բանվորական տեղեր:
6. Ընդհանուր լաբորատորային պիտույքներ և նյութեր աշխատանքի համար:
7. Բացատրական-տեղեկատու պիտույքներ:

ՀՐԱՀԱՆԳԶԱԿԱՆ-ՏԵՂԵԿԱՏՈՒ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀ-

ՊԱՆԵԼՈՒ ՏԵՂՆ ՈՒ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ:

Աշխատանոցի աշխատանքները պիտի տարվեն մեծ մասամբ ակտիվ մեթոդներով, իսկ այդ կալահանջի համապատասխան պիտույքներ՝ ինքնուրույն աշխատանքներ տանելու համար:

Այդ պատճառով էլ, աշխատանոցի արտադրական մասի շատ կարևոր բաժինը լինելու յե հրահանգչական — բացատրական բնույթ կրող պիտույքներով սարքավորումը: Իրանց թվին վերագրում ենք —

1. Մանկական տեխնիկական դրականութիւն — գրքեր, պիտույքներ ինքնուրույն կերպով պատրաստելու և սարքավորելու համար, մանկական տեխնիկական ամսագրեր, տեղեկատուներ և այլն:

2. Հրահանգչական քարտեր՝ վորպես աշխատանքային — այս կամ այն առարկայի պատրաստման ընթացքը նկարագրող, այնպես էլ ոպերացիոն՝ այս կամ այն առանձին ոպերացիան ուղիղ ձևով կատարելու համար հիմնական ցուցմունքներ տվող:

3. Մմեն տեսակի մոդելներ, վորպես յերեխայի կառուցողական մտքերը հրհրող նմուշներ:

4. Յերեխաների ձեռքով պատրաստելու համար մատչելի տարբեր կոնստրուկցիաների գծագրեր և նկարներ:

5. Պատկերներ, վորոնք ցույց են տալիս թե աշխատանքի ժամանակ ինչպիսի դիրք պիտի ընդունել և ինչ ձևեր գործադրել:

6. Արտադրական-տեխնիկական ռեպերտուրա, ձևաչափեր (ձևելու համար պատրաստի որինակներ):

Այդ բոլորը պիտի ունենալ բավարար քանակութեամբ, վորպեսզի աշխատող խմբակը մշտապես ապահովված լինի:

Բայց այստեղ կարևոր տեղ է բռնելու և այս բոլոր նյութերի համապատասխան ձևով կազմակերպելու հարցը:

Միանգամայն թխալ կլինի, յեթե բոլոր ունեցածը սենյակի պատերի վրա փակցվեն:

Իրանով մենք յերբեք լավ հետևանքների չենք հասնի, աչքի առաջ ունենալով հենց միայն այն հանգամաքը, վոր այն բոլորը ինչ վոր յերկար ժամանակ կախված են լինում

պատից, աչքերի համար դառնում են սովորական, և վնչ վոք ուշադրութիւն չի դարձնում նրանց վրա:

Մենք պիտի ապահովենք. 1) այդ նյութերի ուղիղ և նպատակահարմար պահպանութիւնը. 2) նրանց բաժանումը աշխատավորների մեջ, ըստ առաջացման կարիքի. 3) դասա—
վորումը աշխատանքի մեջ հարկավոր մոմենտներին:

Գրքերի, քարտերի, տետրերի և այլն համար անհրա-
ժեշտ է մի փոքրիկ պահարան, վորի մեջ այն կարգով պիտի պահել նրանց, վոր անհրաժեշտ մոմենտին կարելի լինի արագութեամբ դուրս հանել և տալ աշխատավորներին:

Այնպիսի իրերը, ինչպիսին են բանվորական զիրքը և աշխատանքի ձեւերը ցույց տվող պատկերները, կարելի յե և կախել պատին, բայց այդ դեպքում միայն նրանք, վո-
րոնք հաճախ են հարկավորվում աշխատանքի համար:

Մնացածները ցուցադրվում են միայն վորոշ ժամանա-
կաշրջաններում, և դրա համար ել նպատակահարմար է ունենալ 1 2 հատուկ վահանիկներ:

Վորոշ տեղ պիտի հատկացրած լինի և գրատ ախտա-
կին, ըստ վորում նպատակահարմար է ունենալ, վոչ թե մի գրատախտակ, այլ մի քանիսը, վորպեսզի, նախ՝ մի քանի միատեսակ խմբակների հետ միաժամանակ պարա-
պելու դեպքում կարելի լինի թողնել արված նկարները, և յերկրորդ վորպեսզի ղեկավարի և մանուկների բացա-
արութիւնների գծադրական ձեւավորումների ժամանակ գրատախտակի մակերեսի տարածութեան պակասութիւն չզգացվի:

Գրատախտակի մոտ մի սեղան ել պիտի ունենալ ղեկավարի համար, վորի վրա նա կարողանա դասավորել ընթացիկ աշխատանքի համար անհրաժեշտ պիտույքները, նմուշները և այլն:

ՀԱՇՎԱՌՔԱՅԻՆ—ԿՈՆՏՐՈԼԱՅԻՆ ՍԵՂԱՆ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒ-

ՅՅՈՒՆՆԵՐԻ, ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒՅՅԱՆ, ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒՅՅԱՆ ՅԵՎ

ԱՅԼ ՏԱԻՏԱԿ

Աշխատանոցում անհրաժեշտ է ունենալ մի առանձին տեղ, կահավորված հատուկ սեղանով, վորի վրա կարելի լինի կատարել՝ ավարտած աշխատանքների ընդունելու—

թիւնը, նրանց ստուգումը և բերակը: Այդ նպատակով սեզանը սարքավորված է լինում անհրաժեշտ հիմնական չափանիշ հարմարեցումներով և գործիքներով: Սեղանը պիտի գտնվի աշակերտներից կազմված ընդունելութիւն կատա-
րող բրիգադի կարգադրութեան տակ: Բրիգադը կազմվում է վորոշ ժամանակամիջոցով հայած աշխատանքի բնույթին: Այդ սեղանի վրա յել նշանակում են հաշվառման քարտե-
րում կամ տետրերում աշակերտների ավարտած աշխա-
տանքները:

Հենց այստեղ ել նպատակահարմար է ունենալ վահան-
ներ, տախտակներ, վորոնց վրա կախվելու յեն աշակերտների տարբեր խմբակների կողմից իրենց վրա ընդունած պար-
տավորութիւնները, աշխատանքային պլանները և այլն, նմանապես և սոցմրցակցութեան, հարվածայինութեան և աշխատանքի հաշվառման պարտավորութիւնները:

Այս բոլոր մոմենտները անհրաժեշտ է աշակերտների հետ միասին նախնական խորհրդակցութեան նյութ դարձնել այն ղիտողութիւններից հետո, վորոնք կատարվելու յեն նրանց կողմից արտադրութեան վայրում:

Վորովհետև մենք այստեղ գործ ենք ունենալու գլխա-
վորապես փոփոխական նյութերի հետ ապա և վահանների կոնստրուկցիան ել պիտի համապատասխանի դրան, այսին-
քըն: -1) Վահաններն ըստ հարավորութեան պիտի ունենան մեծ մակերես, վորպիսին կտացվի, յեթե վահանի վրա մի քանի ծալովի փեղքեր չինվեն. 2) վահանի վրա ամրացրած նյութերը չպիտի փշանան կամ փշացնեն վահանը, վորի հա-
մար հարմար կլինեն կարտոնի կամ ֆաների վահանները՝ անկյունափակերով կամ շրջանակներում — նյութերը նրանց մեջն անցկացնելու համար:

ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ

Աշխատանոցում աշխատանքի համար ամենահամապա-
տասխան նյութը կլինի նախապատրաստած նյութը, այսին-
քըն՝ հատկապես նախապատրաստած ստանդարտային չափե-
րի տախտակներ, չորս կողմից տաշված լատաններ, պլա-
կատներ, կարտոնի կտորներ, թղթեր, թիթեղներ և այլն:

Այդ անհրաժեշտ է վորպեսզի մանուկներն ազատված լինեն իրենց ուժերից վեր նախապատրաստական աշխա-

տանքներ կատարելուց, վորոնք նաև պահանջում են բարձր մասնագիտական ունակութիւններ, և ֆիզիկական ուժի գործադրում: Բացի դրանից այդ հանգամանքը աշխատանոցի աշխատանքի կազմակերպումը կմոտեցնի նյութերով պարենավորելու այն սխստեմին, վորպիսին մենք տեսնում ենք արտադրութեան մեջ, ուր մշակողական և մոնտաժային — հավաքողական ցեխերը գործ են ունենում կիսաֆաբրիկատների հետ, ստանալով այդպիսիները մթերողական ցեխերից կամ այլ արտադրութիւններից: Այդպիսի մթերումները կարող են կատարվել բարձր խմբակների յերեխանների ձեռքով (2-րդ կոնցենտրի), կամ արտադրութեան մեջ ըստ հատուկ պատվերի, ուր ունեցած դաղգյահները շնորհիվ վոչինչ բան է նրանց պատրաստելը:

Հաշվի առնելով այդպիսի նախապատրաստական նյութերի ստացումը, անհրաժեշտ է պլանավորել և նրանց պահպանելու տեղը:

Այդ նպատակին հատկացրած պահարանը պիտի ունենա 4-5 բաժանմունքներ՝ տարբեր նյութերի համար, և ամեն մի բաժանմունքում՝ հատուկ դարակներ — նրանց առանձին տեսակներով համար, և այդ այն հաշվով, վոր կարելի լինի արագութեամբ ստուգել՝ վոր նյութից ինչ քանակութիւն կա այնտեղ, նաև արագութեամբ հանել այնտեղից յերեխաններին բաժանելու համար:

Այնպիսի նյութերը, ինչպիսին են՝ մեխերը, շուրուպները բոլորը և այլն, պիտի տեղավորված լինեն այդ նույն պահարանում, մի առանձին հանվող արկղի մեջ, այդ նյութերի տարբեր տեսակների համար՝ առանձին բաժանմունքներով:

Հենց այստեղ էլ պիտի տեղավորված լինի մի առանձին արկղիկ՝ տեղավորելու համար նյութերի այն տեսակների պաշարը, ինչպիսին են սոսինձ, չոր ներկեր և այլն:

Հենց այստեղ էլ, դռների փեղքերի վրա՝ ներսի կող-

մից, կարելի յե ամրացնել նյութերի հաշվառման մատչան, վորի մեջ նշանակվում են, թե վորքան նյութեր կան այդտեղ, և վորքան այս կամ այն խմբակի, այս կամ այն աշխատանքի համար:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱՐԱՆՔՆԵՐԻ

ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՏԵՂԸ:

Քանի վոր աշխատանքների մեծ մասը մանուկները մեկ-յերկու պարապմունքների ըրթացքում ավարտել չեն կարող, ապա նրանց պահպանելու համար անհրաժեշտ է վոր խմբակի ամեն մի աշխատանքի համար հաստատուն կցված տեղերը ապահովված լինեն:

Մանր արտադրանքների և մթերումների պահպանութեան համար, նպատակահարմար է ունենալ այդ նպատակի համար հատկացրած ընդհանուր պահարանում՝ բրիգադային կամ ողակային բաժանմունքներ: Յուրաքանչյուր խմբակի բրիգադները իրենց բաժանմունքները պիտի տեղավորեն պահարանի մի կողմը, վորի վրա նշանակվելու յեն խմբակի համարը և բրիգադների առանձին համարները:

Սուշոր արտադրանքների կամ խմբակային մթերումների համար, նպատակահարմար է այդպիսի պահարանի կողքին ունենալ առանձին դարակ, վորի վրա կարելի լինի թողնել արտադրանքներն ու մթերումները:

ՍԱՆԻՏԱՐԱ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ:

Այստեղ մենք մտցնում ենք այնպիսի կահավորում, վորն ապահովելու յե սանիտարա-առողջապահական զրութիւնը՝ թե իրենց աշխատող մանուկների, և թե աշխատանոցի բնակարանի:

Առաջին հերթին պիտի ձեռք բերել զեղոքայքի փոքրիկ պահարան՝ «շուտափուլթ ոգնութիւն» ցույց տալու համար՝ վիրավորվելու, վնասվելու, այրվելու և այլն դեպքերում: Այդ նպատակի համար մի առանձին պահարանի մեջ, վորի դռնակի վրա, աչքի ընկնելու համար, կարմիր խաչի նշան է դրվում, պիտի տեղավորել. — բամբակ, բինտ, յող կամ նրան փոխարինող բրոմ-ֆերոն, մագ՝ այրածի դեմ և կապարային աղաջուր:

2-րդ պահանջը պիտի լինի՝ աշխատանքից հետո լվացվելու հնարավորութեան ապահովումը, վորի համար, յեթե չկա ջրատար կրան, պիտի ունենալ լվացարան և լազյան (թաս): Վերջինս կրհարկավորվի և կավով աշխատանքներ կատարելու ժամանակ, յեթե հարկավոր է նախապես ձեռ-

քերը լվանալ, վորպեսզի լվացված կավով խեցիները չկեղտոտվեն: Լվացարանի հետ, իհարկե պիտի ունենալ նաև լվացարանային անհրաժեշտ պիտույքներ՝ դրա համար հատուկ դարակի վրա: Ըստ վորում սրբիչը չորացնելու հարմարութիւն ստեղծելու համար, նրա ծայրերը պիտի հյուսել, վորպեսզի ստացվի մի անծայր ժապավեն, հազցրած դարակի կըր փայտիկին (валик): Այդ հնարավորութիւն կտա ոգավելու սրբիչի ամբողջ՝ յերկարութեամբ, առանց հանելու նրան կախարանից:

Այս բաժնի 4-րդ մոմենտը կազմելու յեն այնպիսի ոժանդակիչ պիտույքներ, վորպիսին են.— խողանակներ՝ հատակը ավելու համար (առանձին խողանակներ պիտի ունենալ ամեն մի աշխատանքային սեղանի համար-նրանց յերեսը ավելելու համար), հին շորի կտորներ՝ վորոնց թաց դրութեամբ կարելի լինի հազցնել խողանակներին թողերը սրբելու համար, և այլն:

Այս անկյունում պիտի կախված լինեն՝ համառոտ, բայց պարզ և հասկանալի հրահանգներ, այն մասին, թե՛ ինչպիսի ոգնութիւն պիտի ցույց տալ՝ մի տեղը կտրելու, վնասվածք ստանալու և այլն դեպքերում, ինչպես պիտի մաքրել հատակը, ոգափոխել սենյակը և այլն:

Մոտավորապես այսպիսի պայմանների մեջ և մեջ պատկերանում աշխատանոցի սարքավորումը՝ նրա արտադրական մասում:

ԴՊՐՈՑԻ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ:

Կուլտուրական-մասսայական աշխատանքը մանուկների հետ, ընդլայնելով նրանց կուլտուրական-քաղաքական աշխարհայացքը, տալով նրանց բնական-գիտական նշանակութիւն (քիմիայի, ֆիզիկայի և այլն ասպարիզում), ոգնելով տեխնիկայի տիրապետմանը, կազմակերպելով մանուկների կուլտուրական ժամանցը և կազդուրիչ միջոցառումները, կարող է հսկայական ոգնութիւն ցույց տալ դպրոցի աշխատանքի վորակի համար տարված պայքարում:

Դպրոցը՝ հիմնական ողակը բոլոր դաստիարակչական և կրթական աշխատանքների՝ յերեխաների հետ, պիտի դառնա նաև նրանց մեջ կուլտուրական-մասսայական աշխատանք կազմակերպող հիմնական բջիջը:

Դպրոցի հիմնական խնդիրները՝ կուլտուրական-մասսայական աշխատանքի կազմակերպութեան ասպարիզում, հանդիսանում են.—

1) Մանուկների հանգստյան 5-րդ որվա կազմակերպումը, մասսայական կուլտուր-քաղաքական և կազդուրիչ միջոցառումների միջոցով:

2) Ակմբա-խմբակային աշխատանքների ծավալումը ազատ ժամերին, ձգտելով առաջին հերթին որինակելի դըպրոցներում—դպրոցական ակումբ հիմնելու:

Դպրոցի ընդհանուր ուսումնական—արտադրական պլանի մեջ պիտի մտցնել կուլտուրական—մասսայական աշխատանքների վերաբերյալ միջոցառումների պարզորոշ շարքը:

ԴՊՐՈՑԻ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՏԱՎՈՐ ՄԻՆԻՄՈՒՄԸ:

Ա. ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

1-ին աստիճանի դպրոցի համար գլխավոր նեցուկ ծառայելու յեն մասսայական միջոցառումները: Խմբակները, բրիգադները և այլն, ստեղծվում են միայն՝ վորպես մանուկների ժամանակավոր խմբավորումներ, վորոշ խնդիրներ լուծելու համար (որինակ՝ աշակերտանքի մի խումբ կազմակերպում է մանկական ցերեկույթ, կազմակերպում է տոնակատարութեան ձևակերպումն, շինում է ողային թղթե ոձեր մրցումներ կատարելու համար, և այլն):

Իրա համապատասխան 1-ին աստիճանի դպրոցում պիտի լինեն:

ՏԵՆԻԿԱՅԻՑ.

1. Աշխատանք յերեխաների հետ՝ պարապմունքներից ազատ ժամերին—աշխատանոցում (աշխատանք թղթի և փայտի վրա—խաղալիքներ, ողային թղթե ոձեր պատրաստելը, սարքավորումներ մանկահրապարակի համար—սանակներ և այլն):

2. Վոչ պակաս մեկ մասսայական միջոցառումից—ամսական (փորձերի յերեկո, ողային թղթե ոձերի մրցումն և այլն):

ՌԱԶՄԱ — ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ . —

1. Մարմնամարզական հրապարակ (խաղ գնդակով, հասարակ ձեռքի վարժություններ (аттракционы):
2. Առավոտյան մարզանք, «մարզանք-ըուպե»:
3. Խաղեր՝ շարժական և սեղանի վրա, դասամիջոցներին և ազատ ժամերին:
4. Վոչ պակաս յերկու մասսայական միջոցառումներից՝ ամսական (որինակ՝ մասսայական մարմնամարզական խաղեր):

ԵՔՍԿՈՒՐՍԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ . —

Վոչ պակաս մեկ եքսկուրսիայից ամսական՝ դպրոցի յուրաքանչյուր խմբի համար (դեպի իր գործարանը կամ ֆաբրիկան, կոլխոզը, պոլիտեխնիկական թանգարանը, բնագիտական եքսկուրսիաներ, եքսկուրսիա՝ դեպի յենթաշեֆ կարմիր—բանակային մասը և այլն):

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՅԵՎ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ . —

1. Մ Ա Մ-ի և Մ Ո Պ Ր-ի պատանի բարեկամների խմբակներ:
2. Զրույցներ պրոեկցիոն լապտերով, սրատմություններ համապատասխան գրականությունից («ինչո՞ւ պայքարում ենք կրոնի դեմ», «ինչպե՞ս են ապրում յերեխաները կապիտալիստական յերկրներում», «ինչպե՞ս են ապրում գանազան ազգությունների յերեխաները Ս. Խ. Հ. Մ.-ի մեջ և այլն):

ԳՐՔՈՎ ՅԵՎ ԼՐԱԳՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ . —

1. Գրադարան կամ շարժական գրադարան:
2. Մասսայական աշխատանք զբոսով և լրագրով: Պատմություն, ընթերցում պրոեկցիոն լապտերով, գրադարանային խաղեր:
3. Պատի լրագիր:

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ . —

1. Մանկական յերգեցիկ խումբ:
2. Ամսական վոչ պակաս մեկ ցերեկույթից:

3. Վոչ պակաս մեկ կողեկտիվ հաճախումից—մանկական թատրոն կամ մանկական կինո (յեթե կան աշակերտները):

1-ին աստիճանի չորրորդ խմբում աշխատանքն աստիճանաբար պիտի բարդանա, մոտենալով ֆաբրորժ և կոլխերիա 7-ամյակների 2-րդ կոնցենտրի աշխատանքին, ուր խմբակների և բրիգադների ցանցը և ճյուղավորված մասսայական աշխատանքը արդեն ծավալված պիտի լինեն:

Բ. ՖԱԲՐՈՐԾ ՅԵՎ ԿՈԼՅԵՐԻՑ 7-ԱՄՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ . —

ՏԵԽՆԻԿԱՅԻՑ . —

1. Խմբակների ցանցը. — Ելկորո — Ռադիո — Ավտո — տրակտորային — Ուղանավային՝ պատանի քիմիկոսների, պատանի փորձական տարներին:

2. Վոչ պակաս մեկ մասսայական միջոցառումից ամսական (նոր տեխնիկայի յերեկո, գյուտարարության յերեկո, կապ հարվածային բանվորների հետ, գրույցներ զինակոչների հետ՝ զիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների մասին, մողելների մրցակցություն և այլն):

3. Ավտոճան-ի պատանի բարեկամների խմբակը:

4. Խոշոր ձեռնարկություններին, կոլխոզներին, սովխոզներին, ՄՏԿ կից դպրոցներում—մանկական տեխնիկական և գյուղատնտեսական կայանները:

ՌԱԶՄԱ — ՑԻԶԻՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ . —

1. Մարմնամարզական հրապարակ՝ սպորտային և կիսասպորտային խաղերով (վոլեյբոլ, բասկեթբոլ, փայտե ամբոց և այլն):

2. Առավոտյան մարզանք:

3. Մարմնամարզական խմբակ:

4. ՊԱԶը ավիաքիմի պատանի բարեկամների խմբակը և զինվորական խմբակներ ու ջոկատներ. — հրացանաձիգների խմբակ (ուր հնարավորություն կա՝ սարդեկ փորձնական հրացանա ձիգային վայր (тип) կամ ոգավել հարևան դպրոցի, հիմնարկի վայրից և այլն):

ՈՔՊ-ի (ոգա—քիմիական պաշտպանություն — ВХО) ջուկատը, ռազմասանիտարական—ջոկատը, ռազմա—ծովային

բրիզազ (ծովափնյա շրջաններում և նավահանգիստ ունեցող քաղաքներում):

5. Մասսայական միջոցառումներ (որինակ՝ մարմնամարզական տոն, մրցակցութիւն, զինարշավ, մասսայական զինախաղեր և այլն):

ԵՔՍԿՈՒՐՍԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ.—

Վոչ պակաս մեկ եքսկուրսիայից ամսական՝ դպրոցի յուրաքանչյուր խմբի համար (դեպի շրջանի կարևորագույն արտադրութիւնները, ելեկտրո և ռազիո կայանները, սովխոզները, կոլխոզները, Մ Տ Կ, թանգարանը—պոլիտեխնիկական, յերկրաբանական, գյուղատնտեսական, հակակրոնական, գեղարվեստադիտական, դեպի կարմիր—բանակային մասերը և կարմիր բանակի տոնը և այլն), հեռավոր եքսկուրսիաներ (դեպի խոշոր արդյունաբերական կենտրոնը, նորակառույցները և այլն):

ԻՆՏԵՐՆԱՅԻՆԱԼ—ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ.—

1. ՄԱՄ-ի և ՄՈՊՐ-ի պատանի բարեկամների խմբակներ.
2. Հակակրոնական խմբակ.
3. Ամսական վոչ պակաս մեկ զրույցից՝ պրոեկցիոն լապտերով, կամ բարձրաձայն ընթերցումից—բոլոր դպրոցականների համար—հակակրոնական թեմայի վրա:
4. Կապի յերեկոներ՝ աարբեր ազգութիւնների բմանուկների մեջ:

ԳՐՔՈՎ ՅԵՎ ԼՐԱԳՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ.—

1. Գրագարան և շարժական գրագարան:
2. Գրական յերեկոներ և վեճեր:
3. Պատի լրագիր:

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ.

1. Խմբակներ.—կերպարվեստ (ИЗО), յերաժշտական (МУЗО), կենդանի լրագիր կամ դրամխմբակ:
2. Վոչ պակաս մեկ յերեկոյթից (ցերեկոյթից) յուրաքանչյուր կվարտալում:
3. Ամսական վոչ պակաս մեկ կուլեկտիվ հաճախումից—աշակերտական կիսո կամ մանկական թատրոն (քաղաքի դպրոցների համար):

Ամսական վոչ պակաս մեկ մասսայական միջոցառումից (որինակ՝ գեկուցում, զրույց, ցուցահանգես, ագիտաներկայացում) ծնողների շրջանում կոմունիստական դաստիարակչութեան հարցերի շուրջը պրոպագանդա մղելու նպատակով:

Իհարկե ամբողջ միտիմումը կարող է լինել մոտավոր չափով: Նա կարող է փոփոխութեան յենթարկվել կախումն ունենալով շրջանի և դպրոցի շրջապատի տնտեսական պայմաններից:

Այդ նշանակում է, վոր յուրաքանչյուր շրջանում պիտի ընտրված լինի մի կոնկրետ միտիմում՝ համաձայն շրջանի առանձնահատկութիւններին: Միտիմումը վորոշ չափով փոփոխութեան կենթարկվի համաձայն այն պայմաններին, վորոնց մեջ գտնվում է դպրոցը: Որինակ, մի գորևե դպրոց ունի հաստատուն բազա՝ բանվորական ակումբ, խորձիթ—ընթերցարան, վորոնք կոզնեն դպրոցին՝ և բնակարան հատկացնելով, և միջոցներով, և ուժերով: Մի ուրիշ դպրոց այդպիսի բազա չի ունենալ: Մի դպրոց հենվելով ձեռնարկութեանը՝ շեֆին և շրջանային մանկական տեխնիկական կայանին, միանգամից կարող է ծավալել տեխնիկական խմբակների ցանցը, մինչդեռ մի ուրիշին այդ կըհաջողվի մեծ ջանք գործադրելուց հետո:

Այդ նշանակում է, թե վոր շրջանում պիտի պլան մշակել միտիմումը դպրոցում հաջորդաբար արմատացնելու համար:

Իչպես ցույց տվինք վերը—առաջին հերթին անհրաժեշտ է կազմակերպել մանուկների հանգստյան ուրը, ոգտագործելով բանվորական ակումբի, խորձիթ ընթերցարանի, ժակտի, դպրոցական հանրակացարանի (յեթե կա այդպիսին) և այլն բնակարանը:

Իայց այդ բավական չէ: Ամեն մի խոշոր դպրոց, և առաջին հերթին կենտրոնական դպրոց, պիտի ձգտի զբարոցական ակումբ հիմնելու, վորի միջոցով նա կարող է ոգտագործել կուլտ—մասսայական աշխատանքները, վոչ միայն հանգստյան ուրերը, այլ և մնացած բոլոր ազատ ժամերը մանուկների:

ԿԱՊ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒՅՅԱՆ ՇԵՏ՝

Դպրոցի և ձեռնարկութեան (կոլխոզի) միջև կնքված պայմանագրի մեջ մտնում է կուլտ—մասսայական աշխատանքները վերաբերյալ պարտավորութուն (դպրոցի կողմից՝ պարտավորութուն — ժակտի, բանվորական հանրակացարանի համարակիցների հետ կապված՝ մանուկների մասսայական միջոցառումներն ոգտագործելով մասնակցութուն ցույց տալ բանվորների (կոլխոզիկների) կուլտիկնցադային հոգատարութեան բարելավման պայքարի մեջ. հիմնարկութեան: կողմից (կոլխոզի)—ընտրել կուլտբանակայիններ և ինժինեքատեխնիքական ուժեր՝ կուլտմասսայական աշխատանքների և տեխպրոպագանդի համար՝ մանուկների շրջանում, ոգնել սարքավորման աշխատանքներին, հատկացնել դահլիճը տեխնիկական խմբակների համար, ժամեր հատկացնել բանվորական ակումբում (խրճիթ—ընթերցարանում) մանուկների հետ աշխատանքներ տանելու համար, միջոցներ հատկացնել դպրոցի կուլտմասսայական աշխատանքների համար):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿՎԱՐՈՒՅՑՈՒՆԸ՝

Կուլտմասսայական աշխատանքի կազմակերպութունը հանձնարարվում է ուսուցիչներին մեկին:

Կուլտմասսայական աշխատանքի կազմակերպիչը կամ ընտրված ուսուցիչը իր ամբողջ աշխատանքը տանում է՝ հենվելով պիոներ—կազմակերպութեան և աշակերտների ակտիվի վրա (կուլտմասսայական աշխատանքի բրիգադի վրա):

Կուլտմասսայական աշխատանքի կազմակերպիչը, կամ այդ մասին պատասխանատու ուսուցիչը պիոներկազմակերպութեան հետ միասին պլանավորում են դպրոցի մասսայական աշխատանքը, նրա կատարման համար գործի յեն խառնում ուսուցիչներին (խմբակների ղեկավարութեան, եքսկուրսիաներ անցկացնելու համար), ծնողական ակտիվը (ոժկոմիների միջոցով), շեֆ—ձեռնարկի մասնագետներին և կուլտ—բանակայիններին, (ձեռնարկների կուլտխորհրդի միջոցով, հասարակական կազմակերպութունների բջիջների միջոցով—տեխ—խմբակների ղեկավարութեան համար, աշա-

կերտների հանգստյան որը որապահութուն անելու համար, եքսկուրսիաներ կազմակերպելու համար) գործի կանչված հասարակական ակտիվին սիստեմատիկաբար հրահանգներ են տալիս, պայմանավորվում են կուլտմասսայական հիմնարկութունների հետ՝ յերեխաների համար (պիոներ—ակումբ, Մանկ. տեխն. գյուղատնտեսական կայաններ, մանկական կինո, թատրոն և այլն), և բանվորական ակումբի հետ (խրճիթ—ընթերցարանի հետ) միասին աշխատելու պլանի վերաբերյալ:

ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Կուլտմասսայական աշխատանքները համար միջոցները (կուլտմասսայական աշխատանք կազմակերպողի ուժիկը մի քանի խմբակների ղեկավարների ուժիկը, պիտույքներ, գրականութուն, աշխատանյութ ձեռք-բերելու) գումարվում են հասարակական կազմակերպութունների զբամամուծումներից և շեֆ-հիմնարկների կողմից հատկացված միջոցներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Դպրոցի կուլտմասսայական աշխատանքի հաշվառման ձևերը.—

1. Կուլտմասսայական աշխատանքի կազմակերպչի ուրագիր:
2. Կուլտմասսայական աշխատանք տանող աշակերտական բրիգադի որատեար:
3. Աշխատանքի տված հետևանքների լուսաբանութուն դպրոցական պատի թերթում:
4. Կուլտմասսայական աշխատանքի անկյուն դպրոցում:
5. Աշակերտների ստեղծագործութունների և գյուտարարութեան ցուցահանգես:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝

Ուսումնասիրելու համար դյուղատնտեսական արտադրութեան տարրական հիմունքները դպրոցում, անհրաժեշտ է համապատասխան կերպով կազմակերպված նյութական

բազա: Այդ բազան պիտի կազմված լինի 3 իրար հետ կապված տարրերից.— 1) Դպրոցի գյուղատնտեսական լաբորատորիա, 2) դպրոցական հողամաս և 3) արտադրություն (սովխոզ, կոլխոզ, ՄՏԿ), յենթարկելով հասարակական—արտադրական աշխատանքը՝ դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին:

Դպրոցական հողամասի նպատակն է ծանոթացնել աշակերտներին բուսաբուծության և յերկրագործության գիտական սկզբունքների հետ, տալ նրանց գործնական ունակություններ՝ այդ սերտ կապով իրար հետ կապված գյուղական տնտեսության բաժինների տարրական գործիքներին հետ վարվեցողության մեջ:

Դպրոցական հողամասը պիտի ծառայի վորպես մի լաբորատորիա, վորտեղ գուտ բնական պայմանների մեջ, դիտողությունների, փորձերի և հետազոտությունների միջոցով, ուսումնասիրվում են կյանքից բղխած հիմնական որենքները:

Այն պրոցեսները, վորոնք բնորոշվում են բարդ որդանական նյութերի կազմությամբ՝ բնության պարզ տարրերից՝ տերևների քիմիկալի և արևի ուժի ոգնությամբ, թեկուզ և չեն կարող ուսումնասիրվել ներքին քիմիկալ տեսակետից, այնուամենայնիվ աշակերտներին կողմից բավականաչափ լավ յուրացվել կարող են՝ բույսի ծլման և զարգացման վրա գիտողություններ կատարելով և բոլոր արտաքին ենթակետերից հանդիսանալով ֆակտորների ուսումնասիրությամբ (յույս, ջերմություն, ջուր, ոդ, հանքային սնունդ):

Իսկ յեթե հողամասի վրա հիմնվեն մի շարք փորձական—հետազոտական աշխատանքներ, վորոնք ներգործեն ինչպես բույսերի, այնպես էլ նրանց շրջապատող պայմանների վրա, ապա բուսաբանության գիտական սկզբունքները, բիոլոգիական տեսակետից, միանգամայն կյուրացվեն աշակերտների կողմից:

Կանաչ բուսական որգանիզմի և նրան շրջապատող գրության վրա ներգործման պրոցեսում, մենք կիրառում ենք մի շարք անօրգանական բնույթ կրող ձևեր, յերբեմն շատ պարզ, հեշտ կիրառելի, յերբեմն շատ բարդ ու դժվար կիրառելի: Անկախ այն հանգամանքից, թե հողամասի վրա տեղի ունեցող պրոցեսները պարզ են թե բարդ, հեշտ են

թե դժվար կիրառման համար, նրանց պիտի միանգամայն տիրապետել: Պիտի կարողանալ սեփական ձեռքերով, այս կամ այն գործիքների, մեխանիզմների ոգնությամբ գործադրել բազմատեսակ պրոցեսների այն ամբողջ գումարը, վորոնց հետ գործ ենք ունենում բույսերի աճեցման ժամանակ:

Նպատակը այն պիտի լինի, վոր աշակերտները սովորեն գ. տ. աշխատանքի տեխնիկական ունակությունները, բանական, գիտական և կատարյալ ունակությունները: Իհարկե, ունակությունները հարկավոր են, վոչ թե հենց այնպես, նրա համար միայն, վորպեսզի աշակերտը նրան տիրապետած լինի, այլ նրա համար, վորպեսզի աշակերտը գործադրելով նրանց աշխատանքի պրոցեսում այս կամ ձևով, ակտիվորեն ներգործելով շրջապատի գրության վրա, ծա վալի իր իմացողական ընդունակությունները, փոփոխի իր սեփական բնույթը և դաստիարակվի, վորպես նախաձեռնող և գործունյա մասնակցող՝ սոցիալիստական շինարարության գործում:

Բուսաբուծության և յերկրագործության շրջանում ունակություններ ստանալու տեսակետից, վորոնք մատչելի լինեն հողամասի վրա կազմակերպությանը, ապա հողամասը կդառնա մոտավորապես այնպիսի կարգի արհեստանոց, վորպիսին է, որինակ, փայտի, մետաղիև ազնի արհեստանոցը:

Դպրոցի խնդիրների մեջ մտնում է աշակերտների աշխատանքի այն ձևերի և մեթոդների ստեղծման անհրաժեշտությունը, վորոնց ոգնությամբ նրանք կարողանան կազմակերպել աշխատանքը կոլեկտիվ սկզբունքների վրա՝ կոմունիստական դաստիարակության պայմաններին համապատասխան, վորոնց ոգնությամբ աշակերտները կարողանան կազմակերպել կոլեկտիվ աշխատանքը, սովորեն կույտ կազմակերպչական աշխատանքի կենդանի որինակներին վրա, յուրացնեն աշխատանքի ձևերն ու մեթոդները խոշոր սոցիալիստական շինարարության մեջ:

Այդ գործի մեջ հողամասը կարող է ծառայել վորպես սկզբնական դպրոց:

Հետևապես դպրոցական հողամասը հանդիսանում է ա) ամենապարզ փորձնական—հետազոտական աշխատանք-

ների լաբորատորիա, ուր ուսումնասիրում են բուսաբու-
 ծության գիտական հիմունքները, տեսականը գործնականի
 հետ միացնելով, ուսուցումը արտադրական աշխատանքի
 հետ միացնելով, բ) արհեստանոց, ուր աշակերտներն ու-
 սումնասիրում են գ. տ. աշխատանքի տարրական գործիք-
 ները, աշխատանքի ձևերը՝ այդ գործիքներով, ուսումնասի-
 րում են «բնական տեխնոլոգիան» (Կ. Մարքս). գ) աշխա-
 տանքի կոլլեկտիվացման սկզբունքների և աշխատանքի
 բաժանումը կիրառելու հիմքերի վրա՝ աշխատանքային պրո-
 ցեսի կոլլեկտիվ ձևերի հետ աշակերտներին ծանոթացնե-
 լու բազա դ) գ. տ. աշխատանքի ռացիոնալիզացման ցու-
 ցադրական բազա:

Այսպիսով հասկանալի յե դպրոցական հողամասի հրա-
 կայական նշանակութունը և նրա տեղը գ. տ. արտադրու-
 թյան պոլիտեխնիկական ուսուցման սխեմայի մեջ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՅԵՎ ԿՈՒԽՈՉԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ:

Ինչ փոխհարաբերության մեջ պիտի լինի դպրոցական
 հողամասը կոլխոզի արտադրության հետ: Դպրոցական հո-
 դամասը՝ վորպես գ. տ. լաբորատորիա և գ. տ. աշխատան-
 քի արհեստանոց, սեփականութուն է հանդիսանում վոչ
 թե կոլխոզի կամ սովխոզի, այլ նա կազմում է դպրոցի
 սեփականութունը և այդ պատճառով ել յենթարկվում է
 վոչ թե կոլխոզի արտադրական պատվերին, այլ դպրոցի
 ուսումնական—դաստիարակչական խնդիրներին:

Բայցի և կոպիտ սխալ կլինեք դպրոցական հողամասը
 անջատել տեղական գյուղատնտեսական արտադրությունից:

Մենք չենք կարող դպրոցական հողամասի վրա ամ-
 փոփել ամբողջապես բուսաբուծությունն ու յերկրագոր-
 ծությունը, այդ պատճառով ել չենք կարող ծանոթացնել
 աշակերտներին բոլոր տարրական գործիքների հետ և գյու-
 դական—տնտեսության այդ ճյուղերի բարդ մեխանիզմե-
 րի հետ: Մենք չենք կարող դպրոցին կից կազմակերպել
 մեքենայացրած բուսաբուծություն. մենք չենք կարող դըպ-
 րոցում ունենալ գ. տ. մեքենաների և գործիքների և այլն
 լրիվ կոմպլեկտ: Հենց այդ ել հարկավոր է: Այդ բոլորի հետ
 մենք պիտի ծանոթանանք կոլխոզի, սովխոզի և ՄՏԿ-ի
 անմեջական արտադրության մեջ:

Դպրոցի կապը կոլխոզի հետ, կոլխոզի արտադրության

լայն և խորին ոգտագործումը ուսումնական—դաստիար-
 ակչական նպատակներին՝ պիտի ուժեղացնել:

Այդ ուժեղացումը պիտի կազմակերպի ուսուցիչը դըպ-
 րոցի ծրագրի պահանջներին համապատասխան: Այն գիտե-
 լիքներն ու կարողությունները, վոր աշակերտները ձեռք
 են բերում գ. տ. լաբորատորիայում և դպրոցական հողա-
 մասում իրենց աշխատանքի պրոցեսում, պիտի ամրապնդ-
 վեն և ընդլայնվեն: Վորպես բազա՝ այդ գ. տ. գիտելիքնե-
 րի և կարողությունների ամրապնդման և ընդլայնման հա-
 սարակական—արտադրողական աշխատանքի ընթացքում,
 հանդիսանում է սովխոզը կամ կոլխոզը:

**ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՂԱ-
 ՄԱՍՈՒՄ:**

**ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆԲ-
 ՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ**

Բուսաբուծությունը այնքան լայնատարած է, նա այն-
 քան առանձին ճյուղեր ունի, և ամեն մի ճյուղում ել այն-
 քան առանձին մշակույթներ, վոր դպրոցի առաջ բնականա-
 բար հարց է ծագում, թե բուսաբուծության վոր ճյուղերը
 հարկավոր են կազմակերպել դպրոցական հողամասում:

Բուսաբուծության բոլոր բազմատեսակ ճյուղերից
 անհրաժեշտ է ընտրել այնպիսի մի ճյուղ, վորը աչքի ըն-
 կնի հետևյալ հատկանիշներով:--

1) Տեխնոլոգիական պրոցեսների լիությամբ և 2) աշ-
 խատանքի մատչելիությամբ, յերեխաների ուժով, այդ
 ճյուղում:

Տեխնոլոգիական պրոցեսների լիությունը կոնկրետ
 կերպով արտահայտվում է նրանում, վոր անցնելով բու-
 սաբուծության տվյալ ճյուղը, աշակերտները հասկացողու-
 թյուն են ձեռք բերում բոլոր տիպիք արտադրական պրո-
 ցեսների մասին, վորոնք տեղի ունեն բուսաբուծության
 մեջ ընդհանրապես, ծանոթանալով միաժամանակ բուսա-
 բուծության տարրական գործիքների հետ: Այդ ճյուղերի
 թվին կարելի յե դասել՝ այգեգործությունը, դաշտագոր-
 ծությունը, բանջարաբուծությունը և ծաղկաբուծությունը:

Յեղնելով բուսաբուծության հիմունքների պոլիտեխ-
 նիքական ուսուցման խնդիրներից, անհրաժեշտ է դպրոցա-

կան հողաբաժնում կազմակերպել հետևյալ գլխավոր բաժինները.— 1) ջերմածու, 2) ձեռատունկ բանջարանոց, 3) փորձնական հողամաս, 4) կոլեկցիոն հողամաս, 5) պրապեր մշակույթներ, 6) տնկարան, 7) սերմաբուծութեան հողամաս, 8) ծաղկանոց, զարգարանքի ծառեր:

ՄՇԱԿՈՒՅՅՆԵՐԻ ԸՆՏՐՈՒՅՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ:

Յեթե մենք հարց ենք դնում յերեխաների առաջ մշակույթների քանակութեան մասին, ապա մեր մեջ միանգամայն բնական ցանկութիւնն է առաջ գալիս, վորքան կարելի լի շատ մշակույթներ առաջ բերել: Անհրաժեշտ է, իհարկէ, յերեխաններին ծանոթացնել բույսերի առանձին տեսակների, հնարավորին չափ մեծ քանակութեան հետ, անհրաժեշտ է ցույց տալ նրանց մեր յերկրի տարբեր աշխարհագրական վայրերում գոյութիւն ունեցող բուսական տեսակների բազմազանութիւնը: Բայց այդ խնդրի լուծումը անհրաժեշտ է համակերպել յերեխաների աշխատանքի ուսումնական—գաստիրակչական խնդիրների և դպրոցի իրական հնարավորութիւնների հետ:

Չե՞ վոր ընդհանուր գիտական ծանոթութիւնը բուսական որգանիզմների կենսական գործունեյութեան հետ և ունակութիւններ ձեռք բերելը տարրական գործիքների հետ վարվելու մեջ՝ բուսաբուծութեան ասպարիզում, կարող են իրականանալ և համեմատաբար փոքր քանակութեամբ մշակույթների մշակման ժամանակ: Միևնույն չե՞, թե յերկու կամ թե տասը մշակույթների վրա տալիս ենք մենք յերեխաններին գիտական հասկացողութիւն՝ հողաշերտի փրփրացման, բույսերի հատման, շարքային ցանքի և այլն պրոցեսների մասին: Յեթե յերեխանները կարող են հասկանալ աշխատանքի այդ ձևերը գազարի կամ շողգամի վրա, ապա կատարելապէս գոհացուցիչ կը լինի, վորպէսզի աշխատանքի այդ ձևերը կիրառվեն և բոլոր մնացած մշակույթների վերաբերյալ: Յեթե յերեխանները հասկանան բույսերի բուկը տալու նշանակութիւնը կաղամբի որինակի վրա, ապա այդ կատարելապէս գոհացուցիչ կլինի, վորպէսզի նրանք հասկանան նաև բուկը տալու պրոցեսը՝ կարտոֆիլի, պոմիդորի և ուրիշ շատ մշակույթների վերաբերյալ:

Այդպիսով, վորպէսզի յերեխաններին տալ գիտական հասկացողութիւնների սխտեմ՝ բույսերի կյանքի մասին, ունակութիւնների սխտեմ, բազմատեսական արտադրական տիպիք պրոցեսների—բուսաբուծութեան ասպարիզում, դրա համար բնավ կարիք չկա տարածելու առանձին բուսական մշակույթներ մեծ բազմազանութիւն: Բավական կլինի մտցնել 5—6 մշակույթներ՝ բնորոշ առանձին բուսական խմբակների համար, լրիվ տեխնոլոգիական պրոցեսներով, և արտադրական պրոցեսների գիտականորեն յուրացման խնդիրը լուծված կարելի լի համարել, պայմանով վոր աշխատանքի մեթոդները ճիշտ ձևով տարվեն:

Հետևապէս, գործը նրա մեջ չէ, վորպէսզի դպրոցական հողամասի վրա կարելոյն չափ շատ մշակույթներ հիմնեն, և շատ ջերմածներ ձեռնատունկ բանջարանոցում, սերմաբուծութեան հողաբաժնում և այլն, այլ գործը նրա մեջ է, վորպէսզի բնորոշ այնպիսի մշակույթներ, վորոնք — 1) տիպիք են Աբխազիայի և Անդրկովկասի գյուղատնտեսական բուսականութեան համար, 2) տիպիք են արտադրական պրոցեսների սխտեմի վերաբերյալ, վորոնք տեղի ունեն մեր աշխատանքների մեջ այդ մշակույթների համար:

Գյուղատնտեսական բուսականութեան ամենատիպիք խմբերը հետևյալը են— 1) թեյ, ծխախոտ, 2) պտղաբեր բույսեր, 3) տեխնիկական յուղաբույսեր, ոստի, (թելաշատ, բուժիչ բույսեր), 4) կանաչեղենի մշակույթներ (ձմեռային, և ամառային բանջարաբուծութիւն), 5) հացահատիկային և բակլայանման, 6) կերաբույսեր (վիկա վարսակի հետ, սուրճնեպս, բատատ), սիրտային խոտերի ցանքեր:

ՍԱՆՈՒՅՅՈՒՅՅՈՒՆ:— Ամենատիպիք արտադրական պրոցեսները՝ հողաշերտերի և բույսերի ամբողջ բազմազանութեան վերաբերյալ, սրանք են.—

- 1) Հողաշերտի մշակումը — գութանի հերկ, բահի, հերկ ցաքանումը՝ տափանով, ձեռքի թորիտով (փայտատ), փոցիտով (արմուղով) և այլն:
- 2) Հողի պարարտացումը որգանական պարարտանյութերով (աղբ, հանքային աղեր, փթած բույսեր):
- 3) Սերմերի նախապարարտումը — մաքրելը, գտումը անվարակելի դարձնելը, բեղունութեան (ծլման) և մաքրութեան վորոշումը:
- 4) Սերմերի ցանքը — շող տալով, շարքային, բնավոր խոր և յերես:

5) Տնկումը — տունկերի, թուփերի, ծառերի:

6) Ցանքերի և անկումների վրա հողատարութիւնն, — ջրելը, հողի վերին շերտի փխրունացումը և պայքար աղբախոտերի դեմ, բուկը տալը (մարոնելը), պայքար վնասարարների և հիվանդութիւնների դեմ, ավելորդ մասնների կտրելը, մասնները վեր կապելը, պատվաստածյուղ վերցնելը, պատվաստ և այլն:

7) Բերքահավաք — հունձ, փորել հանելը, ցողունահատումն, հողից մաքրելը, դեղելը, փոխադրել և կարելը:

8) Բերքի գտումը — առողջը հիվանդից ջոկելը, ջոկել ըստ մեծութան, ըստ կշռի, սերմանյութի ընտրութիւնը և այլն:

9) Բերքի պահելը — սիլոսացում, դիզելը և լեցնելը նկուղները, ամբարները, տեղափոխութիւնը մի տեղից մի այլ տեղ. պայքար վնասարարների դեմ կոնսերվներ պատրաստելը:

10) Ցանքսափոխութիւն մտցնելը — հողաբաժինների բաժանումը ցանքսափոխութիւն, դաշտերի, մշակույթների հերթական փոխանակութիւն:

11) Նոր տեսակներ դուրս բերելը — բույսերի արհեստական ձևով բեղմնավորումը:

Մշակույթների ընտրութիւն վերոհիշյալ սկզբունքները պիտի արտահայտվեն հետևյալում.

Ձերմածուներում բազմացնել՝ ծխախոտի, կաղամբի, պոմիդորի, բակլաժանի տնկումը:

Ձեռատունկ բանջարանոցներում աճեցնել՝ պոմիդոր, կաղամբ, վարունկ, բակլաժան, պղպեղ, գազար, սոխ, բողկ և այլն:

Պողաբերներից. — մանդարին, խնձորենի, տանձենի, թզենի, խաղողի վազ, խուրմա (յուրաքանչյուրից 2-ական կամ 3-ական հատ):

ԴԱՇՏԱՅԻՆ ՀՈՂԱԲԱԺԻՆՈՒՄ. — Բոլոր տեխնիկական բույսերը — թեյ, ծխախոտ, յուղաբույսեր, գերան (խորզենի), լիմոնի ծառ, սորգո, վարզ, տեխնիկական թերաշատ սամի, հացահատիկային (յեզիպատացորեն), բակլայանման — լոբի, սոյա, բուժիչ բույսեր:

Սերմաբուծութիւն բաժնում բավական կլինի մշակել 5—10 ական սերմի ոշախներ. — ծխախոտ (տեխնիկական

բույսերից,) բանջարանոցային 2—ամյա բույսերից — կաղամբ, գազար, ճակընդեղ, միամյա բույսերից — վարունկ, պղպեղ:

Բավական կլինի մեկ ծաղկանոց՝ պարզ, հեշտ, աճեցման յենթակա ծաղիկներով:

Պահանջումն առանձնապես հարց արժարծել կուլեկտիվ հողաբաժնի և փորձադաշտի մասին:

ԿՈՒԼԵԿՏԻՆ ՀՈՂԱԲԱԺԻՆ.

Կուլեկցիոն հողաբաժինը, ինչպես ցույց է տալիս այսուհար, իրենից ներկայացնումն տարբեր բույսերի մի կենդանի կուլեկցիա (հավաքածու):

Ձեռնատունկ բանջարանոցում մենք բազմացնում ենք 5—6 առանձին մշակույթներ, բայց այդ չի նշանակում, թե դրանով պիտի սահմանափակվել:

Վոչ ձեռնատունկ բանջարանոցում, վոչ սերմաբուծութիւն հողաբաժնում, վոչ ել ջերմանոցում, մենք չենք կարող աշակերտներին ծանոթացնել — հացահատիկային, տեխնիկական, բուժիչ (բժշկական), մեղրաբեր, կերաբույսերի, վորեւ մշակույթների և այլն բույսերի հետ:

Կուլեկցիոն հողաբաժնի նպատակն է համեմատաբար փոքրիկ հողաբաժինների վրա՝ 1-2 քառ. մետր տարածութիւնում, յերեխաներին ծանոթացնել բույսերի բիոլոգիայի (կենսախոտութիւն) և նրանց սպեցիֆիկ առանձնահատկութիւնների հետ (դաշտային, բանջարանոցային և այլեզործական մի քանի տիպերի հետ):

Այդպիսի կուլեկտիվ հողաբաժնում մենք կարող ենք ներկայացնել վոչ միայն տեղական շրջանային բնահատուկ մշակույթներ, այլ մի շարք մշակույթներ ուրիշ շրջաններից, այլ աշխարհագրական լայնութիւններից: Որինակ մեզ հարկավոր է յերեխաներին ցույց տալ կոնկրետ, կենդանի նյութերի վրա, վոր մի շարք մշակույթներ Ա ի Ն Մ - ի հյուսիսային շրջաններում չեն կարող աճել, յեթե նրանք բերված են այնտեղ հարավից: Մյուս կողմից ել պիտի ցույց տալ վոր գիտութիւնը աշխատում է հարավային մշակույթները դեպի հյուսիս փոխադրելու ուղղութիւնում, յերկարամյա փորձերի է ընտրութիւնների միջոցով, հարմարեցնելով հարավային մշակույթները՝ նոր հյուսիսի ավելի ցուրտ կլիմայական պայմաններին:

Մշակույթների տարածման հարցերի հետ յերեխաներին ծանոթացնելու այս խնդիրը՝ կապված կլիմայական պայ-

մանները հետ կարող ե լուծումն ստանալ դպրոցում կող-
լեկցիոն հողաբաժնի միջոցով:

Կոլլեկցիոն հողաբաժնի վրա մենք կարող ենք մշակե
մի խումբ բույսեր՝ հետաքրքիր այս կամ այն բիոլոգիա-
կան հարմարութեամբ նմանապես և մի շարք տեղական գ. տ.
արտադրութեան համար նոր բույսեր:

Կոլլեկցիոն հողաբաժնի նյութը մի միջոց ե հանդի-
սանում դպրոցի լաբորատորիայի (գյուղատնտեսական) սար-
քավորման համար, նաև ուսումնասիրելու և դիտողութեւն-
ներ անելու բույսերի վրա արևադարձային պայմաններում:

ՓՈՐՁԱԴԱՇՏ-

Յերբ խոսվում ե դպրոցական հողաբաժնի մասին, սո-
վորաբար ի նկատի յեն առնվում այդ հողամասի փորձնա-
կան խնդիրները, այսինքն, վոր դպրոցական հողամասը
ինքն իրենից ներկայացնելու յե մի յուրատեսակ փորձնա-
կան դաշտ:

Դպրոցական հողամասը չի կարող լինել մի միայն
փորձերի համար հատկացված հողամաս:

Ամեն մի փորձ պահանջում ե հատուկ, բավականա-
չափ գծվար, յերբեմն դպրոցական պայմաններում անկի-
րառելի մեթոդիկա:

Ահա թե ինչու, թեկուզ և դպրոցը չի կարող հրա-
ժարվել փորձնական խնդիրներից, քանի վոր նրանք հան-
դիսանում են յերեխաների մեջ բուսական որգանիզմների
կենսագործունեյութեան գիտական հասկացողութեւններ
մշակելու հիմնական խնդիրները, այնուամենայնիվ անհրա-
ժեշտ ե պայմանավորվել, վոր հողաբաժնի ամբողջ տարա-
ծութեւնից փորձերին հատկացվում մի փոքրիկ մասը միայն:

Մնացած հողաբաժնի ամբողջ տարածութեւնը իրենից
ներկայացնում ե մի սովորական լաբորատորիա — արհես-
տանոց:

Դպրոցական հողաբաժնի վրա ամբողջ բուսաբու-
ծութեւնը պիտի բաժանված լինի առնալագն 2 մասի.—
սովորական ուցիտնալ (բնական) սնիսնիկական ձևերով
տարվող բուսաբուծութեւն, և փորձնական բուսաբուծու-
թեւն:

Այդպիսով փորձնական հողաբաժնի խնդիրը կայանում
ե նրանում, վորպեսզի աշակերտները ծանոթանան ուսուց-

չի ղեկավարութեան տակ փորձնական գործի մեթոդիկայի և
տեխնիկայի հետ, դպրոցական ծրագրին համապատասխան
մատչելի վորձերի այնպիսի մի սխառեմ գործադրեն, վոր-
ոնց հեռանկրով ստանան սկզբնական տարրական բուսաբու-
ծական գիտելիքների մի սխառեմ:

Վորպեսզի տարբեր պայմաններում կարելի լինի կազ-
մել դպրոցի ուսումնական դաստիարակչական խնդիրներին
բավարարող և յերեխաների հասակի համապատասխան փոր-
ծերի մի սխառեմ, հարկավոր ե յեղնել հետևյալից.

Քանի վոր բուսաբուծութեան նպատակն ե գլխավո-
րապես այն, թե ինչպե՞ս և ին՞չ միջոցներով ստիպել բույ-
սերին, վորքան կարելի յե, շատ բերք տալու, և քանի վոր
բերք ստանալու ամբողջ աշխատանքը հավասարվում ե մար-
դու ներգործմանը շրջապատի վրա, ըստ ամին՝ բույսի
շրջապատի և իրեն՝ բույսի վրա, ապա, այստեղից ել պարզ
ե, վոր փորձերը պիտի ընդգրկեն յերկու բնութի աշխա-
տանքներ՝—փորձեր՝ ներգործելու շրջապատի վրա, և փոր-
ձեր՝ ներգործելու իրեն՝ բուսական որգանիզմի վրա:

Բույսի շրջապատին մենք վերագրումենք.—մթնոլորտը,
հողա շերտը և բնաշրջանը: Մթնոլորտի գործոններից (Ֆակ-
տոր) բույսի կյանքի համար նշանակալից են հետևյալ չորսը.
լույս, ջերմութեւն, ող և խոնավութեւն: Այս գործոններին
ել, դպրոցական պայմաններում փորձեր կատարելու ժամա-
նակ, մենք պիտի մոտենանք գ. տ. բույսերի պահանջներին
նրանց հարմարեցնելու տեսակետով:

Հողաշերտի հարմարեցման խնդիրները կարող են հան-
գել հետևյալ յերկու ձևերին, — հողի մշակումը և պարար-
տացումը:

Հետևապես, բույսին շրջապատող՝ արտաքին գործոն-
ներին զուգահեռ աշխատանքը հանգում ե այդ շրջապատի
բույսի պահանջներին հարմարեցնելու պրոցեսներին:

Այդ տեսակ փորձերի սխեման կարող ե լինել մոտա-
վորապես հետևյալը:

1. ՓՈՐՁԵՐ ՄԹՆՈՒՈՐՏԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԼԵՏ:

- 1) Լույսը և նրա ազդեցութեւնը բերքատութեան
վրա. ա) միասեռ բույսերի ցանքս— լուսավոր և մութ տե-
ղում:
- բ) բույսերի արհեստական մթնեցումը:

2) Ողի բարեխառնութիւնը՝ վորպես բերքատուութիւն գործոն. ա) սառնամանիքին չդիմացող բույսերի ցանքսը՝ վաղ գարնանը. (որինակ վարունկը):

բ) Դիտողութիւն՝ սառնամանիքի ժամանակ ծաղկող այգու ցրտատարութիւն վրա և այլն:

3) Ողը և նրա ազդեցութիւնը բույսի կյանքի վրա, այսինքն բերքի վրա.

ա) բույսերի միջև ընկած տարածութիւն հողի փխրացնելը,

բ) փակ շիշի մեջ սերմերի աճեցնելը:

Սոսնավութիւնը և նրա ազդեցութիւնը բերքի վրա. —

ա) Բույսերի ջրելը:

բ) Դիտողութիւն յերաշտի ազդեցութիւն վրա:

II. ՓՈՐՁԵՐ՝ ՀՈՂԱՇԵՐՏԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԵՏ:

1. Հողաշերտի մշակումը. ա) վաղ և ուշ մշակումը հողաշերտի.

բ) խոր և յերես մշակումը հողաշերտի.

գ) փխրուն և խիթ (կոշտ) հողաշերտ:

2. Հողաշերտի պարարտացումը. ա) աղբային պարարտացումը տարբեր քանակութիւններով և տարբեր պարարտացման ժամկետներով.

բ) հանքային պարարտացում (վառարանի մոխրով),

գ) բակլայանման՝ վորպես բորակածին արտադրող:

Այս ե փորձակատարութիւն սխեման միջնորդի և հողաշերտի գործոնների հետ, այսինքն շրջապատի գործոնների հետ:

Բացի շրջապատի վրայի ազդեցութիւնից, մենք կարող ենք ազդեցութիւն գործել նաև իրեն՝ բույսի վրա, նրա բերքատուութիւնը բարձրացնելու նպատակով:

Այդ ազդեցութիւնը մենք կարող ենք սխեմ սերմից, գործադրելով մի շարք ազդեցութիւններ բույսի վրա նրա աճման ընթացքում և վերջապես ազդեցութիւն գործադրել բերքահավաքի ժամանակ և նույնիսկ բերքը պահելու ընթացքում:

Արտաքին շրջապատը մենք աշխատում ենք հարմարեցնել բույսի հիմնական պահանջներին: Դրա համար փորձեր ենք կատարում վերոհիշյալ սխեմայով, բայց միաժամանակ աշխատում ենք բույսն ևս հարմարեցնել արտաքին շրջապատին, այսինքն ուզում ենք այնպես ներգործել նրա վրա,

վորպեսզի բույսը ամենակատարյալ կերպով ոգավի նրա շրջապատի գործոններից:

Բույսերի՝ իրենց շրջապատի հետ հարմարեցնելու փորձերի սխեման կարող ե լինել հետևյալը. —

1. Փորձեր՝ սերմերի հետ. ա) ցանքս՝ խոշոր և մանր սերմերով,

բ) Ցանքս՝ մաքրած և չմաքրած սերմերով,

գ) Ցանքս՝ թունավորած և չթունավորած սերմերով,

դ) Ցանքս՝ զտած և խառն սերմերով:

2. Սերմի տեսակների քննութիւնը. — ցանքս՝ միևնույն բույսի տարբեր տեսակի սերմերով:

3. Ցանքսի և տնկման ձևերը. — ա) Ցանքս՝ շաղ տալով: շարքային, բնավոր, ժապավենային:

բ) Ցանքս՝ խոր և յերես:

գ) Տնկումն՝ խոր և յերես:

դ) Ցանքս և տնկումն՝ վաղ և ուշ ժամանակներում,

ե) Սերմերի ծածկելը չոր հողով — մինչև ջուր տալը և ջրելուց հետո:

4. Բույսերի վրա հոգատարութիւն տանելու ձևերը. —

ա) քաղհան՝ աղբախոտերից,

բ) փխրունացումը մեկ, յերկու և այլն շարքամիջի հողաշերտերի,

գ) բույսերի բուկը տալը՝ մեկ, յերկու և այլն բույսերի,

դ) ավելորդ մասների պոկելը (Ֆիլիս).

ե) մասները վեր կապելը և ձողեր ցցելը,

զ) ջուր տալը՝ մաքուր, աղմոտ՝ շատ և քիչ,

ը) ջրելը՝ ջրալի պարարտանյութով,

թ) անասունների աղբով ցողունի շուրջը լցնելը և այլն:

5) Բերքահավաքը և նրա պահպանումը.

ա) բերքահավաքը խակ և հասած դրութիւնով, խոնավ և չոր յեղանակին,

բ) պահպանելը թարմ դրութիւնով՝ վաասված և անվաս քանջարեղենների և պտուղների,

գ) պահպանելը թարմ դրութիւնով և կոնսերվներ շինելով և այլն.

դ) պահպանելը բնասերմերի՝ ձմեռը, հողի տակ:

Այս ե բույսերի վրա ներգործելու փորձերի սխեման: Ուսուցչի առաջ դրված պիտի լինի այն խնդիրը, թե ինչպես նա կարողանալու յե ճշգրիտ կերպով դասավորելու փորձնական աշխատանքների թեմաները ըստ ուսուցչ-

ման տարիները համաձայնեցնելով այն բնագիտութեան և գյուղ. տնտ. աշխատանքի դասերի ծրագրերները հետ:

Դպրոցական փորձնական հողամասը, շատ փոքրիկ՝ իր տարածութեամբ, բնավ չի ազատում կոլխոզում, կոլխոզ-նիկների մոտ, փորձնական դաշտ կազմակերպելու մեջ դեր խաղալու անհրաժեշտութեամբ յունից, բայց այս հարցը ավյալ հողվածի խնդիրները սահմանից դուրս է գալիս:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գլխավորը, վոր պիտի յուրացնել, — ԶՀՐԱՊՈՒՐՎԵԼ ԴԸՊ-ՐՈՑԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՄԲ: Պիտի շարու-նակաբար ինկատի ունենալ, վոր յերեխաների ուժերը սահ-մանափակ են, վոր դպրոցը ամառը արձակուրդի մեջ է գտնվելու, գլխավոր՝ և պիտի ինկատի ունենալ, վոր հողա-մասի նպատակը չէ բնավ, վոր նրանից շատ մթերքներ ստացվեն դպրոցի համար, այլ այն, վոր յերեխաների ամե-նորյա աշխատանքի ընթացքում, դարձանային, ամառային և աշնանային ամիսների մեջ, շատ արագ, յերբեմն մի քանի ըոպեյի մեջ՝ դասի ժամանակ կատարել այս կամ այն գի-տողութեանը, մի շարք եքսպոնատներ (ցուցադրական իր) բերել դպրոցը՝ ուսումնասիրելու համար, սովորել տեխնի-քական աշխատանքի տարրական ձևերը անմիջական աշխա-տանքի պրոցեսում: Պիտի ինկատի ունենալ, վոր դպրոցը չի կարող սահմանափակվել բուսաբուծութեան և յերկրա-գործութեան հիմունքների ուսումնասիրութեամբ միմեայն դպրոցական հողամասի վրա, այլ փոխադրելու յե այդ ու-սումնասիրութեանը կոլխոզի անմիջական արապրութեանը

Մինչև այսօր ել մենք չգիտենք մանկ. ան Գ. տ. աշխատանքի արապրողական նորման (չափը), վորի հիման վրա յե կարելի լինի լուծել այս կամ այն մշակույթի տա-րածութեան նորմայի խնդիրը: Ուստի կարելի յե միայն ասել մոտավորապես, վոր դպրոցական հողամասի վրա, ա-վելի կամ պակաս նպատակահարմար կերպով տեղավորե-լու համար, բնոր բուսաբուծութեան վերև հիշված բաժին-ները, հաշվելով նրանց թվում նաև ուղիները և ջուր հա-վաքելու տեղը, հարկավոր է վերցնել, մոտավորապես, 2000 — 3000 քառ. մետր տարածութեան:

Հողամասի վրա միշտ ել կգտնվեն այնպիսի աշխա-տանքն, վորոնք յերեխաների ուժից վեր կլինեն և արգել-ված՝ մեր որենսդրութեամբ: Ուստի անհրաժեշտ է գործի մեջ խառնել նաև հասակավոր աշխատավորները:

Վորտեղ պիտի տեղավորված լինի դպրոցական հողա-մասը դպրոցական շենքի վերաբերմամբ: Նրա կոչումը ինքը ցույց է տալիս, վոր դպրոցական հողամասը պիտի տեղա-վորված լինի դպրոցին կից — նրա կողքին: Այդ պահանջը առաջ է գալիս այն պատճառով, վոր յերբեմն ուսուցչին անհրաժեշտ է լինում աշակերտների հետ միասին, դասի ժամանակ, մի քանի ըոպեյով դուրս գալ այդ բնական լա-բորատորիան, ղիտողութեանը անելու, աշխատանքի չափի հաշիվներ կատարելու և այլն:

Յեթե դպրոցական հողամասը դպրոցից 1—2 կլմ. հե-ռավորութեան վրա գտնվի, ապա նրա նշանակութեանը խիստ կհասնանա, իսկ մի շարք դեպքերում կհավասարվի զե-րոյի:

Դպրոցի հողամասի տարածութեան կազմակերպման ժամանակ ինկատի առնված պայմաններից արժանի յեն ուշադրութեան հետևյալ յերեքը. — ցանկապատը, ջուրը և ինվենտարի սարքավորումը:

Կոլխոզի կամ սովխոզի հետ կնքած պայմանագրի մեջ առաջին հերթին մտցնել ցանկապատի հարցը: Աստիճանա-բար պիտի կառուցել «կենդանի» ցանկապատ, վորի համար ամենահամապատասխանը հանդիսանում են — ակացիան, ցրո-պոզին (БОЯРЫШНИК), վայրի խնձորենին մասրին (վայրի վա-րդենի), ալպյան հաղարձենի, բալսամոնի (ПИХТА), յեղենի, նոճի և այլն:

Ցանկալի յե ջուր ունենալ հենց հողամասի մեջ (որի-նակ՝ ջրհորի), կամ հողամասին կից:

Յ Ո Ւ Ց Ա Կ

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ՝ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ

ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՈՅՈՒՄ:

(կազմված է 20 հոգու հաշվով).

Լ. ՓԱՅՏԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Ա. ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ ԿՈՆՏՐՈԼԱՅԻՆ ՅԵՎ ՆՇԱՆԱԴՐԱԿԱՆ

| | Չափը. | Քանակը. | Գինը. |
|--------------------------|------------|---------|--------|
| Ծալովի մետրեր | | 4 հատ. | 1 ռ. |
| Քանոններ՝ մ/մ-ի բաժանված | 50 սմ. | 10 հատ. | 30 կ. |
| Անկյունաչափեր՝ ատաղձա- | | | |
| գործային | 12 սմ. | 10 հատ | 40 կ. |
| Ռեյմուս (ռեյսմաս) | | 10 հատ | 60 կ. |
| Անկյունաչափեր (ուղղան- | | | |
| կյուն) | | 4 հատ. | 40 կ. |
| Անկյունաչափեր (малок) | | 2 հատ. | 60 կ. |
| Մատիաներ՝ նշանադրական | | 10 հատ. | 06 կ. |
| Կարկիներ՝ աղեղով | 15-18 ս/մ. | 5 հատ. | 1ր 20. |

Բ. ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ ՄՇԱԿՄԱՆ

Ա) ՀՂԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|------------------------------------|----------|---------|---------|
| Ֆինական դանակներ | 7 սմ | 20 հատ. | 1—50 կ. |
| Ստրուզան (ոանդա)՝ ձեռքի | 15—20 սմ | 4 հատ. | 2.—00 |
| Դուրեր՝ տափակ—լայնու- | | | |
| թյունը | 5 մմ | 4 հատ. | —40 |
| " " " " | 12 մմ | 4 հատ. | —50 |
| " " " " | 25 մմ | 4 հատ. | —75 |
| " " կիւաշրջանաձև | 9 մմ | 4 հատ. | —30 |
| " " " " | 18 մմ | 4 հատ. | —65 |
| Ռուբանկա(ոանդա) մեկ | | | |
| լեզվակով | 4 մմ. | | |
| կաղապարը՝ 22×5×5 սմ | | 20 հատ. | 1—75 |
| " " կրկնակի լեզվակով (հղկիչ) | | 20 հատ. | 3—00 |

| | | | |
|----------------------------|--------------|---------|------|
| Շերխերել (ոանդա)—կաղապարը՝ | 22×5, 5×5 սմ | | |
| լեզվակի լայնությունը | 2, 5 մմ | 10 հատ. | 1—50 |
| Կիսաֆուզան (նեղլիկոան- | | | |
| դա)—կաղապարը | 6 մմ | | |
| լեզվակի լայնութ.— | 5 մմ | | |
| բարձրությ.— | 5 մմ | | |

Բ. ՍՂՈՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|-------------------------------|------------------|---------|-------|
| Սղոցներ՝ աղեղակոր—կոթի | | | |
| յերկարությունը | " " " " | | |
| " " աղեղի | " " " " | | |
| " լստ լանության կտրելու | | | |
| համար բերանի յերկար. | 50—60 սմ | 5 հատ. | 1—30 |
| " " " լայնութ. | 2—3 սմ | 10 հատ. | 1—30 |
| " լստ յերկարության կտրող, | | | |
| կտրացնող, բերանիլայնու- | | | |
| թյունը | 7—8 մմ | 5 հատ. | 1—10 |
| " դանակաձև—բերանի լայ- | | | |
| նությունը | 4 5 սմ | 5 հատ. | 1—50 |
| " կիւալայն միջին մեծության | | | |
| ատամներով՝ բերանի յերկա- | | | |
| րությունը | 25—30սմ | 5 հատ. | 1ր 00 |
| " նեղ՝ բերանի լայնությունը | | | |
| յերկարությունը | 2—2, 5սմ | 5 հատ. | 1ր 00 |
| Լորզիկներ—սղոցիկներով | 25—30 սմ | 5 հատ. | 1—60 |

Գ) ԾԱԿԵԼՈՒ ՅԵՎ ԿՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|-------------------------|----------|---------|------|
| Դանակներ (արմատներ | | | |
| կտրելու համար) | | | |
| Կացիներ 500—800 գրամ | | | |
| ձանրությամբ կոթի յերկա- | | | |
| րությունը | 25—30 սմ | 3 հատ. | 1—20 |
| Մախաթներ՝ ատաղձագոր- | | | |
| ծային—յերկարութ | 4—5 սմ | 10 հատ. | —50 |

Գ) ԲՈՒՐՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | |
|--|---------|--------------|
| Գայլիկոն (коловорот) — (բուրդու) | 2 հատ. | 3—20 |
| Ծայրեր՝ նրա համար՝ կենսարոն. արամագիծը | 6—26 մմ | 10 հատ. 3—50 |
| ” ” պղալաձև ” | 3 սմ | 4 հատ. 1—00 |
| Գայլիկոն՝ պողպատե, փայտե կոթով | 5 հատ. | —40 |

Ե) ՔԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|-------------------------------------|----------|--------|-----|
| Քերիչներ (цикля) | 5—12 սմ | 2 հատ | —50 |
| Տովրիչներ րաշպիլ կիսաշրջանաձև—յերկ— | 20—25 սմ | 5 հատ. | —60 |

Ձ) ԾԵԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|-------------------------|-----------|---------|--------|
| Մուրճեր՝ ատաղձազ. կշիռը | | | |
| 200—300 գր. կոթի յերկ. | 25 սմ | 20 հատ. | —50 կ. |
| Մուրճեր՝ բուլթ (кианка) | 300—400գ. | 10 հատ. | —40 կ. |

Գ. ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ ՍՈՆՏԱԺԱ—ՀԱՎԱՔՈՂԱԿԱՆ

| | | | |
|-------------------------------------|-----------|---------|--------|
| Աքցաններ (клевцы) | 16—18 սմ. | 9 հատ. | 90 կ. |
| Պտուտակահաններ՝ ատաղձազ. (отвертка) | | 10 հատ. | —80 կ. |

2. ՄԵՏԱՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Ա. ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ ԿՈՆՏՐՈՒԱՅԻՆ ՅԵՎ ԿՈՊԱՐԱՅԻՆ

| | | | |
|---|-----------|---------|-----------|
| Քանոնների՝ մետաղյա, զըծերի բաժանած—յերկ.— | 20—30 սմ. | 5 հատ | 1ր—30 կ. |
| Անկյունաչափեր՝ մետաղյա | 12×9 | 5 հատ. | 2.—00 |
| Գծիչներ՝ պողպատյա | | 5 հատ. | խնքնագործ |
| Կերներներ | | 25 հատ. | 25 կ. |
| Շտանգեն—կարկիներ | | 1 հատ. | |

Բ. ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ ՄՇԱԿՈՂԱԿԱՆ

Ա) ԿՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|--------------------------------|----------|--------|------|
| Մկրատներ՝ թիթեզ կըսրելու համար | 20—35 սմ | 5 հատ. | 3—50 |
|--------------------------------|----------|--------|------|

| | | | |
|------------------------------------|-------|---------|------|
| Բռնիչներ (кусачка) | 17—20 | 10 հատ. | 1—75 |
| Դուր՝ յերկաթահատ (зубило) | | 5 հատ. | —65 |
| Ծակիչներ (бородок)— յերկարուլթ. | 3 մմ. | 3 հատ. | —30 |

Բ) ՍՂՈՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|---------------------------------|-------|--------|------|
| Ջեռնասղոցներ՝ փականագործի յերկ— | 30 սմ | 5 հատ. | 3—20 |
| Թևեր նրանց համար | | 20 սմ | —15 |

Գ) ԲՈՒՐՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|--------------------|--------|---------|-------|
| Մտախարներ (дрели) | | 1 հատ. | 8ր 00 |
| Գայլիկոն (բուրդու) | 3—5 մմ | 10 հատ. | 2. 00 |

Դ) ՀՂԿԵԼՈՒ ՅԵՎ ՔԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|----------------------------------|----------|---------|--------|
| Խարտոցներ՝ տափակ, սուրբատամ—յերկ | 20—25 սմ | 10 հատ. | —80 կ. |
| ” ” ” յերեսատամ ” ” ” | ” ” ” | 10 հատ. | —80 կ. |
| ” կիսաշրջ. սուրբատամ ” ” ” | ” ” ” | 5 հատ. | —80 կ. |
| ” ” 3 յերեսանի ” ” ” | 10—15 | 5 հատ. | —40 կ. |

Ե) ԾԵԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|--------------------------------------|--|--------|---------|
| Պտուտակահաններ (отвертка) | | 5 հատ. | |
| Մուրճեր փականագործային կշիռը 400 գր. | | 5 հատ. | —80 կ. |
| ” ” բուլթ թիթեղի համար | | 5 հատ. | —80 կ. |
| ” ” ” մեծ (թոխմախ) | | 1 հատ. | |
| Թեղանիք (ручник) | | 1 հատ | |

Գ. ՍՈՆՏԱԺԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

| | | |
|------------------------------------|----------|----------------|
| Աքցան—տափակրերան | 17—20 սմ | |
| ” ” ” կլոր-բերան | | 2 հատ. 1—50 |
| Ջողիչ (паяльник) | | |
| Կշիռը 250 գր. | | 5 հատ. 1—50 |
| Բանալի՝ պտուտակի (гаечные)—զանազան | | 3 հատ. |

Գ. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՈՄԱՐ

| | | |
|---|--------|---------|
| Մամուլ՝ ձեռքի (ТИСКИ) | 2 հատ. | 3—00 |
| Զնդան (ռեւիի կտորների համար) | 2 հատ. | |
| Քառանկյունի տաշած յերկաթների՝ թիթեզի վրա աշխատելու համար յերկ 3×3 սմ 50 սմ | 3 հատ. | |

Յ. ԹՂԹԻ ՅԵՎ ԿԱՐՏՈՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Ա. ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ ԿՈՆՏՐՈՒԱՅԻՆ ՅԵՎ ԿՈՊԱՐԱՅԻՆ

| | | | |
|----------------------------|-------------------|---------|-----------|
| Քանոններ գծագրական—գլխի | | | |
| Ժիկներով—յերկ | 50 սմ | 10 հատ. | —50 կ. |
| Անկյունաչափեր " " " | 25×30 սմ | 10 հատ. | —50 կ. |
| Մատիաներ՝ կապարային (կոշտ) | | 20 հատ. | —05 կ. |
| կարկիլներ " " " | 15 սմ | 5 հատ. | 1ր 00 |
| անկյունաչափեր | | 5 հատ. | ինքնագործ |

Բ. ԳՈՐԾԻՔՆԵՐ ՄՇԱԿՈՂԱԿԱՆ

Ա) ԿՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | | |
|--------------------------------------|---------|---------|--------|
| Դանակներ (картонажных) | | | |
| յերկարբերան— | 6 սմ | 20 հատ. | —35 կ. |
| " " կարկիլի՝ շրջաններ կլորելու համար | 2 սմ | | |
| Դուրեր՝ զանազան | | 5 հատ. | —50 կ. |
| Մկրատներ | 17—20սմ | 20 հատ. | 1ր —00 |
| Կլոր զանակներ—գորելներ | | 2 հատ. | 3ր 00 |

Բ) ՍՂՈՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | |
|---------------------------|--------|------|
| Սղոցազանակ մանր ատամներով | 2 հատ. | 1—50 |
|---------------------------|--------|------|

Գ) ԾԱԿԵԼՈՒ ՅԵՎ ԿՏՐԵԼՈՒ ՀԱՄՈՐ

| | | | |
|--------------------|-----------------|---------|--------|
| Մախաթներ յերկարութ | 5—6 սմ | 20 հատ. | —15 կ. |
| Ասեղներ՝ պողպատյա | 6 սմ | 40 հատ. | —10 կ. |
| Ծակիչներ | 3×5 սմ | 2 հատ. | —50 կ. |

Դ) ՔԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | |
|------------------------------|--------|----------|
| Խարտոցներ կիսաշրջանաձև 20 սմ | 2 հատ. | 1ր 00 կ. |
|------------------------------|--------|----------|

Ե) ԾԵԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | |
|---------|--------|----------|
| Մուրճեր | 2 հատ. | 1ր 00 կ. |
|---------|--------|----------|

Զ) ԾԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | |
|------------------------------|--------|--------|
| Վոսկորիկ գլադպլիկ(фальцбейн) | 5 հատ. | —20 կ. |
|------------------------------|--------|--------|

Գ. ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ

| | | |
|-------------------------------|--------|--------|
| Վրձիչներ՝ կլոր և տափակ № և 14 | 5 հատ. | —50 կ. |
|-------------------------------|--------|--------|

Դ. ՍԱՐՔԱՐՈՐՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

| | | | |
|------------------------------------|-------------------|---------|---------|
| Կարաված տախտակներ (լա ստենի—ольха) | 50×30 սմ | 20 հատ. | —30 կ. |
| Քանոններ—յերկաթյա՝ յերկարութ | 30×50 սմ | 10 հատ. | 1—50 կ. |
| Անկյունաչափեր՝ յերկաթյա | 25×15 սմ | 5 հատ. | 2—00 կ. |
| Քանոններ՝ (ծալովի) | 15×20 սմ | 5 հատ. | 1—00 կ. |

4. ՎՈՍՏԱՅԻ ՅԵՎ ՄԱԶԱԹԵԼԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Ա. ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ ԿՈՆՏՐՈՒԱՅԻՆ ՅԵՎ ԿՈՊԱՐԱՅԻՆ

| | | | |
|---------------------|-------------------|---------|--------|
| Սանտեմետրի ժապավեն | 1 մետր | 10 հատ. | —15 կ. |
| Քանոններ՝ գծագրական | 50 սմ | 5 հատ. | —30 կ. |
| Անկյունաչափեր | 20×30 սմ | 5 հատ. | —60 կ. |

Բ. ԳՈՐԾԻՔՆԵՐ ՄՇԱԿՈՂԱԿԱՆ

Ա) ԿՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | |
|---------------------|--------|--------|
| Մկրատներ | 5 հատ. | 1ր 00 |
| Դանակներ՝ կոշկակարի | 2 հատ. | —36 կ. |

Բ) ԾԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | | |
|------------------|---------|---------|
| Ասեղներ՝ զանազան | 30 հատ. | 0—01 կ. |
|------------------|---------|---------|

Գ. ՈՒՄԱՆԱԿ ԳՈՐԾԻՔՆԵՐ

| | |
|-----------|----------------|
| Արդուկներ | 1 հատ. 3—00 կ. |
| Մատնոցներ | 10 հատ. —10 կ. |

Գ) ԱՐԴՈՒԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Դ. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ


| | |
|---------------------------|-------------------------------|
| Տախակներ արդուկելու համար | 2ր 00 կ. |
| Ձևաչափեր (շաբլոններ) | 1 ժողովածու ինքնագործ |
| Ձուլհակի շրջանակներ | 5 հատ. " " " |
| Խսիլի դազգյահներ | 5 հատ. " " " |
| Ձուլհակի դազգյահներ | 2 և 4 սեմիդային 2 հատ. 20ր-00 |

ՊՈԼԻՏԵԽՆԻԶԱՑԻԱ

| | | |
|--------------------------------------|---------------|--------------|
| Դազգյահներ ատաղձագործային (верстаки) | 3 հատ. 189—00 | 567ր—00 |
| Մամուլներ (սղմիչներ) զուգահեռ | 1 հատ. | 120 ր 00 |
| Անկյունաչափեր ատաղձագործ | 4 հատ. | 6—50 26—20 |
| Ձեռնասղոց փայտի համար | 6 հատ. | 2—70 15—20 |
| Կաղապարներ—ուանդայի լեզվակներ | 3 հատ. | 18—50 55—60 |
| Ֆուլան—ուանդաներ՝ լեզվակներով | 3 հատ. | 37—80 111—90 |
| Շերխերել—ուանդաներ | 3 հատ. | 13—85 41—65 |
| Տոկրիչներ (ոաշպիլ) | 2 հատ. | 1—90 3—80 |
| Դուրեր (стамеска) № 9 | 1 հատ. | —45 —45 |
| " " " " № 15 | 1 հատ. | —70 —70 |
| " " " " № 23 | 1 հատ. | 1—05 1—05 |
| " " " " № 16 | 1 հատ. | —90 —90 |
| " " կիսաշրջ № 15 | 4 հատ. | 2—80 11—20 |
| " " " " № 19 | 3 հատ. | 2—80 8—40 |
| " " " ծուռ № 22 | 1 հատ. | 1—80 1—80 |

| | | |
|--------------------------------|----------------|----------|
| Դուր (долото) | 3 հատ. 1—50 | 4—50 |
| Սղոցներ՝ մետաղ կտրող (лобзики) | 10 հատ. 5—00 | 50—00 |
| Լորդիկի սղոցի լեզվակներ | 10 տրկդիկ 5—00 | 50—00 |
| Մուրճեր | 8 հատ. 8—05 | 64—40 |
| Աքցաններ՝ տափակ բերանով | 4 հատ. 7—00 | 28—00 |
| " " սուր բերանով | 2 հատ. 7—50 | 15—00 |
| Ձեռնամամուլ (Струбцины) | 3 հատ. 9—20 | 27—60 |
| Դազգյահներ՝ դանակավոր | 2 հատ. 10—50 | 21—00 |
| Մետր փայտյա—ծալվող | 6 հատ. 2—50 | 15—00 |
| Պտուտակահան (Отвертка) | 5 հատ. 1—50 | 7—50 |
| Ռեմուսներ փայտյա | 3 հատ. 2—60 | 7—80 |
| Անկյունաչափեր մետաղյա | 3 հատ. 7—50 | 22—50 |
| Կարի դազգյահներ | 5 հատ. 18—00 | 90—00 |
| Կարկիլներ—մետաղյա | 5 հատ. 7ր 50կ | 37—50 կ. |
| Խոզանակներ՝ խարտոց մաքրելու | 10 հատ. 3—20 | 32—00 |
| Սղմիչ (մամուլ) շրջանակ սղմելու | 2 հատ. 15—20 | 30—40 |
| Դուր՝ յերկաթահատ | 2 հատ. 3—45 | 6—90 |
| Կրոնցերիկուլ | 3 հատ. 4—60 | 13—80 |
| Ձողիչներ (попальники) | 2 հատ. 9—70 | 19—40 |
| Կացին | 2 հատ. 3—20 | 6—40 |
| Կերներներ | 1 հատ. 1—92 | 1—92 |
| Սրոցաքար՝ շրջանաձև | 1 հատ. 19—40 | 19—40 |
| Աքցաններ | 3 հատ. 3—20 | 9—60 |
| Գայլիկոն | 1 հատ. 3—50 | 3—50 |
| Արկղ՝ ձուլման համար | 1 հատ. 105—00 | 105—00 |

Լճագային գրադարան



48 852

1287

377

1000

